№ 4 (182) XVII ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԱՂԷՏԻ ՀԱՆԴԷՊ

Այլևս կասկած չի մնում, որ հայ տարրի դէմ մի նոր դաւ է լարւում Եըլդըզի շրջաններում, ճիշտ այնպէս, ինչպէս այդ տեղի ունեցաւ մեծ-ջարդերի նախօրեակին։ Այն ժամանակն էլ հալածանքն ու բռնութիւնը նոյն բնոյթն էին կրում և առաջ մղւում նոյն ծրագրով, նոյն ուղղութեամբ։

Եւ այսօր մենք կանգնած ենք մերկ իրականութեան հանդէպ, բարձրագոչ ու աղաղակող։

Թէ մեր ստացած բազմաթիւ թղթակցութիւնները և թէ եւրոպական թերթերում երևացող կցկտուր տեղեկութիւնները շեշտում են այն աղէտը, որ մօտիկ ապագայում սպասւում է սարսափից ընկճւած հայկական գաւառներում։

Համիդեան խորամանկութեան տիպիք մի խաղն է, որ գործ է դրւում ներկայումս։ Նա առանց պատճառի նոր կոտորածներ չի սարքի՝ բացարձակ չը մեղադրելու համար։ Դրա համար պէտք է առիթներ ստեղծել. իսկ դա դիւրին է—հալածանք տնտեսական ու բարոյական—և առիթը պատրաստ է. դրա դէմ՝ երկրի մի անկիւնում չէ, միւսում՝ արդարադատ մի ըմբոստ քայլն անխուսափելի։ Կառավարութեան ուղածն էլ դա է։ Վրէժխնդիր հայերի ձեռքով ընկած մի քանի աւազակների կամ հարկահաւաքների շահագործումն է, որ վճռական դեր պիտի խաղայ, թէ՛ իսլամ տարրը յարձակել տալու խային գեաւուրների վրայ և թէ՛ նոյն փոքրիկ դէպքը ապստամբական մի խոշոր ակտ ներկայացնելով Եւրոպային՝ հայ ժողովրդի վրայ կատարելիք բոլոր ոճիրները նրա ապստամբութեան դէմ թիւրք ամբոխի կատաղած տրամադրութեան վերագրելու։

Մեծ-ջարդերից յետոյ Եըլդըզում հաւատացած էին, թէ հայկական դատը մեռաւ և թէ հայ ժողովուրդը՝ արիւնաքամ ու սրտաճաք՝ այլևս ոյժ չը պիտի ունենայ կենդանութեան նշոյլ անգամ ցոյց տալու։ Բայց այժմ պայմանները փոխւում են. Կովկասահայի առնական դիմադրութիւնները թուրք խելագար յարձակումների դէմ եկան վրդովելու սուլթանի հանգիստը։ Եւ ահա նորից հայկական դատի ուրուականը Բոսֆորի ափերում։ Շարունակ կրկնւող „թեթև" հալածանքները, մասնակի սպանութիւնները, գաղթը չ'օգնեցին, պէտք է „ուժեղը"—մի նոր ընդհանուր ջարդ, ընդհանուր գաղթ։ Ու թիւրք բռնապետութիւնը իր չքնաղ ծրագիրն է յարդարում ներկայ հալածանքներով։ 1895 թւից յետոյ դեռ ևս աղէկտուր հառաչը հայի բերանից այդչափ ուժգին չէր լսւել, ինչ որ այսօր է, երբէք բնաջնջումի երկիւղը այնպէս չէր սարսեցրել նրան, ինչպէս այժմ։ Նոյն նախազգացումը չէ՞ արդեօք, որ, այժմ աւելի քան երբևէ, հայ ժողովրդի միտքը տակն ու վրայ է անում, և նա ամբողջ կազմով երերւում է, պատէ պատ ընկնում՝ մի ուղի, փրկութեան մի դուռ գտնելու։ Դաւանափոխութիւն, օտարահպատակութիւն, գաղթ պաշարել են նրա ամբողջ մտածմունքը, և նա պատրաստ է ընդունել որը և լինի, միայն թէ ազատւի այն կօշմարից, որ այնչափ թափով ցցւած է նրա էութեան հանդէպ։

Այո՛, վտանգն ակներև է։ Բայց վտանգի դէմ գլուխ կորցնելն էլ չի համապատասխանում մի ժողովրդի ոգուն, որ այնքան դառն փորձութիւններից է անցել։ Դեռ հայ մասսան չը կարողացաւ ըմբռնել մի պարզ ճշմարտութիւն, թէ դաւանափոխութեամբ, հպատակութիւն փոխելով չէ որ նա պիտի կարողանայ իր ընդհանրական գոյութիւնը շարունակել. դեռ նա չ'ըմբռնեց, որ մասնակի միջոցները անզօր են պաշտպանելու իր ամբողջութիւնը. դեռ նա չը զգաստացաւ այն սխալ քայլերից, որ սիստեմ է ընտրել անել ամեն մի դէպքում, երբ վերահաս վտանգը չոգել է իր դռանը։

Որևէ վտանգի երկիւղը պէտք է մեզ տիրէ այն աստիճան, որչափ դա հարկաւոր է այդ վտանգը լուրջ ու ինքնավստահ քայլերով ընդունելու. հակառակ պարագային երկիւղը դառնում է մի աղէտ, որ կաշկանդում է մեր միտքը, խանգարում է մեր անելիքը և մեզ քշում դէպի այն կողմը, որ ամենից աւելի կոստաբերն է լինելու։

Ֆիզիքական բռնութիւնները անզօր են անդամալուծելու մի ժողովուրդ, երբ նա, թէև թւով փոքր, բայց օժտւած է քաջութեան ու տոկունութեան կուռ յատկութիւններով։ Ցուսահատութեան, վհատութեան մի

փոքր նշանը բաւական է երես տալու բռնի ոյժին,
նրան աւելի յանդուգն, աւելի անամօթ դարձնելու:
Մեր ժողովուրդը Թիւրք բռնութեան հանդէպ միշտ
յուսահատութեան սխալի մէջն է ընկել: Նա ամեն
անգամ էլ դաւանափոխութեամբ ու օտարահպատա-
կութիւն ընդունելու սպառնալիքով է դիմաւորել
Թիւրքի հարուածին, որ լաւ գիտէ հեգնել նման սպառ-
նալիքներ, և հէնց այդ պատճառով էլ հարուածը շա-
րունակ գոյութիւն է ունեցել, և եթէ նա երբեմնակի
մեղմացել է, այդ էլ միայն ոյժ առնելու և աւելի զօ-
րեղ թափով իջնելու վհատուածի գլխին:

Ի հարկէ անմտութիւն է անել այն, ինչ անկարելի
է, բայց աւելի քան անմտութիւն է չանել այն, ինչ
կարելի է:

կան խնդիրներ, որոնց մասին պէտք է մտածել դեռ
վտանգը ներկայանալուց շատ առաջ: Հայաստանում ոչ
մի քաղաք, ոչ մի գիւղ չի կարող ասել թէ վտանգը
ակներև չէր: Այդ րէժիմի տակ սերունդներ են կրթ-
ւել և գիտեն թէ նա որչափ ընդունակ է անակնկալ-
ներ ստեղծել. իսկ վերջին քսան տարւայ պատմութիւ- 95
նը ամբողջապէս անակնկալների խիտ շարքեր են:
Թւականի մեծ ջարդերը յանկարծակիի վերագրելով՝
անպատրաստ գտնւիլը մի կերպ հասկանալի էր. բայց
ի՞նչ անուն կարելի է տալ նման մի ջարդի, եթէ նա
վաղը տեղի ունենայ և հայ ժողովրդին գտնի նախկին
իր անփութութեան մէջ: Չէ՞ որ դա կը լինի ինքնաս-
պանութիւն: Երկրի մէջ ո՞ր անհատը չը գիտէ, թէ
անցեալում լոկ մի հրացանով մի ամբողջ գիւղ է փրկ-
ւել: Նման հազարաւոր դէպքեր կան, շատ լաւ յայտ-
նի նրանց, որոնք այսօր շտապում են ռուսական հիւ-
պատոսների մօտ, օրթօդոքս եկեղեցու գիրկը նետւելու:
Ինչո՞ւ մի անգամ ընդմիշտ չը համոզւել, թէ քանի որ մեզ
վիճակւած է ապրել անակնկալների աշխարհում, պէտք
է միշտ էլ պատրաստ լինել նրանց սառնասրտութեամբ
ու գիտակցօրէն դիմագրաւելու համար: Զէնքի անհրա-
ժեշտութիւնն է չեշտւում ամեն մի քայլում մահի ու
կողոպուտի այդ կլասիք երկրում, իսկ մեր ժողովուրդը
դէպի այդ կարևոր առարկան հարկաւոր լուրջ վերա-
բերմունք չէ ցոյց տւել: Ահա թէ ինչն է պակաս
մեր ժողովրդին: Յեղափոխական տարրը լաւ գիտէ այդ,
և նա իր կոչումի բարձրութեան վրայ կը գտնւի որևէ
պարագային. նա կ՚անի ինչ թելադրում է նրա ոյժն
ու պարտքը, բայց որչափ և նա ուժեղ լինի, անկարող
է ամեն տեղ հասնել, ամենքին զէնք մթերել. դա
պէտք է զգայ ժողովուրդը—և այդ պակասը ինքը պիտի
լրացնի: Ընդհարութիւնը երբ իր հանգիստ օրերին ան-
տարբեր է գտնւում դէպի ապագայ վտանգները, չի կա-
րող շարունակել միայ նոյնը, առանց ենթարկւելու վտանգի
չարիքներին: Բարի տրամադրութիւններն ու ցանկութիւն-
ները չեն փոխում մերկ իրականութիւնից մի շիւղ անգամ:

Թիւրք կառավարութիւնը վճռել է ոչինչ չը զիջել
մեզ, քանի դեռ շնչում է: Նրա պայքարը հայկական
դատի դէմ յուսահատական է և դրա համար էլ ա-
նողոք, այնչափ անողոք՝ պատրաստ զոհաբերելու նրան
իր շահերն անգամ. Նա պատրաստ է իր գոյութիւնն իսկ
վտանգել հայկական դատը թաղելու համար, որովհե-
տև մեր դատի յաղթանակի մէջ է տեսնում իր կոր-
ծանումը:

Նրա այդ յուսահատական ճիգերը մեզ աւելի քան
գրաւական են մեր դատի յաղթանակին, մի յաղթա-
նակ, որի հեռանկարը սիրտ ու ոգի տւեց մեր ժո-
ղովրդին տանելու տարիների զրկանքները. Նոյն յաղ-
թանակի յոյսով բեռնաւորւած դէպի լաւագոյն ապա-
գան՝ նա մարդու պատւաւոր կոչումով կրեց իր անտա-
նելի խաչը և նոյն յաղթանակն ունենալու հաւատով
նա արհամարհեց մահը... և ապրեց:

Դա անցեալում.

Իսկ այսօ՞ր... Այսօր էլ այդ յաղթանակի գաղափա-
րը վառ է ու կանգուն, քանի դեռ նրա համար
մղւող պայքարը գոյութիւն ունի: Ծով ցաւերի դէմ
եղած պայքարը, ինչ ձևով էլ նա արտայայտւի, կեանքի
վերածնութեան նախանշանն է. պայքարը որքան բուռն
թափով տարւի, այնքան էլ կեանքը կուռ ու տևական
կը դառնայ. պայքարն է դարբնում կեանքը ձիգ դա-
րեր ապրելու համար: Ամեն մի յուսահատ ոգի, վհատ-
ւած սիրտ թո՛ղ դիմէ նրան և իր բազկին ու զէնքին
վստահ՝ ապրի:

Այս անգամ էլ հայ ժողովուրդը թո՛ղ ապացուցէ,
թէ ինքը քաղաքացիական հասունութիւն ունի ըմբռ-
նելու իրերի դրութիւնը: Թո՛ղ նա Թիւրք րէժիմի յու-
սահատական այս ճիգը, որ թերևս վերջինն է լինելու,
իր համար յոյսի խարիսխ շինէ և գալիք ամեն մի
վտանգի ու բռնութեան դէմ ոյժ մթերելով՝ պատ-
րաստ լինի նրանց բոլոր զրկանքներին բաց ճակատով
դիմագրաւելու, չը տատանւելով մի վայրկեան անգամ,
թէ վերջնական յաղթանակը իրն է:

ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԿՈՉԻ ԱՌԹԻԻ

Կը հրատարակենք հետեւեալ նամակը, որ Պելճիքայի հայ ուսանո-
ղական մարմիններէն մէկը ուղղած է, ֆրանսերէն լեզուով, Բրիւսելի
համալսարանի պրոֆէսոր Պօլ Էրրէրային, ի պատասխան անոր
հայ երիտասարդութեան ուղղած կոչին, որ հրատարակուեցաւ „Դրօ-
շակի“ 1906 թ. Նոյեմբեր համարին մէջ:

„Դրօշակի“ միջոցով Հայ Երիտասարդութեան ուղղած
ձեր այնքան իմաստուն որքան գեղեցիկ կոչը մեր սրտե-
րուն մէջ արձագանգ գտաւ, և ապերախտութիւն մը պիտի
ըլլար, եթէ, թէև քիչ մը ուշ, մեր շնորհակալութիւնը
չյայտնէինք ձեզ և չըսէինք թէ ինչքան թանկագին են
մեզ համար ձեր սրտապնդող խօսքերն ու ձեր բարեկամու-
թիւնը դէպի մեր ազատագրումի դատը, որ ամէն բանէ ա-
ռաջ արդարութեան դատ մըն է:

„Դրօշակը“, մեր ազատամարտին ուխտուած և արի յա-
ռաջապահը, զուր տեղը չէ որ բաղխած է ձեր դուռը: Կարեկ-

ցական տարտամ բառեր չէ որ լսելի կ'ընէք. օ՛, այնքան յաճախ գթութեան և պերճախօսութեան բոլոր բանաձևերը մեզ ողորմութիւն տրուած են, կարեկցութեան այդպիսի ծաղրով վիրաւորելով մեզ մեր ահաւոր տառապանքին մէջ։ Ի՞նչքաններ կան որ բարի ըլլալու առիթի կըսպասեն զոհերու վրայ դամբանականներ արտասանելով, առանց սակայն մտահոգութիւն ունենալու պաշտպանել վիրաւորուած բայց կենսալից անիրաւածը քանի ողջ է։ Դուք խրախուսանքի և յոյսի սրտաբուղխ և սրտի խօսող բառեր ունիք մեզ համար, ու համակիր մեր դատին և բաղձացող անոր յաղթանակին, կը յորդորէք որ արթնամտութեամբ զինուորուինք վաղուան հաւանականութիւններուն արժանի ըլլալու համար։

Մեր տանջանքներէն քանի մը դառն և շատ սուղ արժող դասեր ունինք։ Հիմա է միայն, այնքան դառն յուսախաբութիւններէ ետքը, որ այլեւս պղտոր չենք տեսներ իրականութիւնը և ենթադրութիւններով չէ որ կ'առաջնորդուինք։ Այնքան շատ պատճառներ կային որ Եւրոպան, ճշտենք բառը, դիւանագիտական Եւրոպան, մեզ հաշւէր կառավարութիւններու ամենէն վայրագին ձեռքը, նոյնիսկ այն ժամին, երբ Կարմիր Սուլթանը զարհուրելի բայց կանոնաւոր ջարդեր կազմակերպեց՝ ամբողջ ազգաբնակութիւն մը մահուան տառապանքի ենթարկելով։ Ծովերուն վրայ Եւրոպայի զրահաւորները և մեր լեռներու ետեւէն քրիստոնեայ բանակներ կ'ընդնշմարէինք նոյնիսկ այն վայրկեանին, երբ դահիճներուն ձեռքերը կը կարմրէին մեր արիւնովը։ Սակայն ոչ մէկ միջամտութիւն։ „Անգլիոյ զրահաւորները չէին կարող Արարատ բարձրանալ" և ռուսական զինուորները տաճկական սահմանագլուխը կ'անցնէին Թուրք սուրերուն դէմ յաղթական Հայ կորիճները յօշոտելու համար միայն։ Նիկոլա Բ-ի, Վիլհէլմ Բ-ի, Սալզպրիի և Հանօթօյի Եւրոպան մէկ կողմէն խրախուսեց Թագաւոր մարդասպանը և միւս կողմէն, խիղճի հանդարտութեան համար, մեզի զարմանքի և կարեկցութեան բառեր ալ թոթովեց, և թողուց ամէն բան „իրենց բնական ընթացքին"։ Ու ոճիրը անգամ մըն ալ պաշտօնապէս և յաղթանակապէս տօնուեցաւ այն օրը, երբ Եւրոպան, սեղանաւորական անխոստովանելի հաշիներով և շատ ներդաշնակ ու սրտառուչ համախոհութեամբ մը, հայկական ջարդերու վաղորդայնին, շնորհաւորեց դեռ արիւնի գինովութենէն դեղեւուն Սուլթան Համիտի 25 ամեայ թագաւորութեան տարեդարձը։

Մեծ ջարդերուն յաջորդեցին մանրակի, գրեթէ անուղղակի, բայց յարատեւ ջարդեր, ընկերացած անօրինակ հալածանքներու և յափշտակութիւններու։ Ամենէն վատը զինուորներուն և ամենէն անարգը Թիւրքերուն՝ կառավարութենէն քաջալերուած՝ կարող է անպատիժ խաղալ մեր պատիւին և կեանքին հետ. այդ պարագային մեր կողմէն որևէ դիմադրութիւն կը նկատուի ապստամբութիւն և իբրև այդ՝ կը հարուածուի։ Բայց կարելի՞ է միթէ հանդուրժել և „համբերել"։ Ինչ բախտ մեր բախտը, և ինչո՞ւ է որ այսպէս անարդարօրէն դատապարտուած պիտի մնանք այս դժոխային կեանքն ապրելու։ Բայց յոյս ունինք որ սադայէլի ուժը պիտի խորտակուի վերջապէս և Արդարութիւնը պիտի արշալուսէ մեր գեղեցիկ երկինքին տակ, որովհետև հաւատք ունինք դէպի քաղաքակրթութեան հրաշքները, ըլլալով ինքներնիս քաղաքակրթութեան բանուորներ արհաւիրքներու այն երկրին մէջ, որ Թուրքիա կը կոչուի, և հաւատք նոյնպէս՝ դէպի յաղթական ապագան։

Մեզ կը վստահացնէք որ հասարակական կարծիքը մեզ հետ է, և այլեւս հասարակական կարծիքի ուժը անճնշելի է։ Ոչինչ այնքան մխիթարական է որքան այդ հաւատումը, որուն ապացոյցները տեսնելու բախտաւորութիւնն ունինք և կը յուսանք, ձեզ պէս և ամէն անոնց հետ որոնք համերաշխութեան և եղբայրութեան թագաւորութիւն մը կ'երազեն, որ դիւանագիտութեան խաղերը տեղի պիտի տան օր մը Հասարակական կարծիքին առջև և անոր դատաստանին պիտի կոչուին ոճրագործն ու իր մեղսակիցները։ Բայց մինչև այդ օրը մենք պիտի տառապինք և պիտի դիմադրենք և պիտի յուսանք, միշտ տոկուն այն հաւատքովը որ մեզ կը զինէ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Ստորեւ դրուած երկու պաշտօնական գրութիւնները, որոնք ստացել ենք Կ. Պոլսից, ուղղուած պատրիարքին Վանի Քաղաքական Ժողովի կողմից, իրենց չափաւոր եւ պաշտօնական-մեղմ տոնի մէջ իսկ կրկնում են „Դրօշակ"ի ներկայ համարում տպուած Վանի թղթակցութեան բովանդակութիւնը։ Եթէ հայ եկեղեցական դասն անգամ տիրող կարգերի դէմ այդպիսի մի ակամայ ճիչ է բարձրացնում, այլեւս հասկանալի է դառնում այն աղեխարշ վիճակը, որ տիրում է ինչպէս Վասպուրականում, նոյնպէս եւ այլ հայաբնակ գաւառներում։ Նոյն գրութիւնների հետ Պոլսից ստացել ենք եւ երկու հեռագիրների պատճէններ, տրուած պատրիարքարանից Վանի Քաղաքական Ժողովին՝ իբր պատասխան նրա հեռագիր-հրաժարականի եւ դիմումների։

Ահա այդ հեռագիրները.

ա. Ծանուցած գրութիւններ չը հասան դեռ. առաջնորդին ճամբու ըլլալով՝ հրաժարելու տեղի չը կայ։ Փետր 13։

բ. Վանի աղքատաց և կարօտելոց նպաստ շնորհելու համար նորին վեհափառութեան դիմելով՝ գթութիւն խնդրեցինք։ Փետր. 15։

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՎԱՆ, 29 յունուար, 1907
Համար 71

Ամենապատիւ Տ. Մաղաքիա Սրբազան Արք-եպիսկոպոս բարձրաշնորհ Պատրիարք Հայոց,

ի Կ. Պոլիս.

Ամեն. Ս. Հա՛յր,

Ստացանք Ձեր Ամեն. Սրբազնութեան՝ համար 116՝ դեկտ. 15 թուակիր գրութիւնը, որով 'ի պատասխան մեր նպաստի խնդրանքներուն՝ նպաստից սնտուկի անբաւականութիւնը յայտնելով հանդերձ, կը խոստանայիք դրամ ճարել դարձեալ ու ղրկել մեզ 'ի նպաստ վիճակիս կարօտելոց։ Ըստ ծանուցման յիշեալ գրոյն, 15 օսմ. ոսկի գումար մը ևս ստացանք Տօքթ. Րէյնոլդսի ձեռամբ և հոգեշնորհ Տ. Ստեփան վարդապետին յանձնեցինք՝ Լիմ և Կտուց Անապատներու թեմական կարօտելոց բաշխելու համար։

Դժբաղդաբար, Սրբազան հայր, հացի տագնապը օրէօր կը ծանրանայ և կարօտելոց թիւերը օրաւուր կը բազմանան։ Բազմութիւնը ո՛չ միայն Առաջնորդարանս, այլ նաև Քաղաք. Ժողովոյ անդամոց տուներն ու գործատեղիները կը խռնուին, մինչև իսկ մեր ու անոնց երթ ու դարձը խափանելով, իրենց ու զաւակաց անօթութիւնը կը յայտնեն ու հաց կը խնդրեն։ Սոքա իրենց կերած հացի նմոյշը կը բերեն մեզի ցոյց տալու, զոր անկարելի է որ մարդ կրնայ տեսնել առանց գանելու և որու մէջ բացի ալիւրէ ամեն տեսակ բան կը գտնուի՝ թեփ, յարդ, խաղողի կուտ ևայլն։

Մեր ունեցած գումարները Ս. Ծննդեան տօնին առթիւ գրեթէ բաշխեցինք և նորէն նպաստելու բան մը չունինք, ուստի անպատասխանի կը մնանք 'ի տես այսչափ թշուառութեան, որուն դարման մ' ընելու անկարող եմք։ Այս պայմանաց ներքև ո՛չ մենք և ո՛չ Քաղաք. Ժողովոյ անդամք չենք կարող պաշտօննիս շարունակել, վասնզի ի՞նչպէս կարելի է լուրջ աշխատութեամբ զբաղիլ քանի մը դռներէ ներս փակուած, և որք հարիւրաւոր կարօտ անձերով պաշարուած

են—մեծ մասամբ կին ու տղաներ, որոնք կը դողան ցուրտէ՝ մերկ ու անօթի։

Կարծես այս Աստուածային պատուհասը բաւական չը լինէր, կառավարութիւնն ալ ամենայն խստութեամբ հին պաքայէ տրոց հաւաքման սկսած է, տաճկաց 1302 թուականէն սկսեալ մինչև օրս, առանց ուշադրութեան առնելու պաքայէ տրոց համար եկած վերջին հրահանգները, որոնց համաձայն անկարողներու պարտքերը շնորհուած են, իսկ կարող համարուածներին ալ չորս տարուան վրայ պիտի գանձին չորս վճարումով. մինչդեռ այժմ առհասարակ ամենքէն ալ կը պահանջի անխտիր, ու ոստիկաններ տուներ մտնելով, ինչ որ գտնեն դուրս կը հանեն ու կը ծախեն. թէև ունեցածնին ալ աւելորդ կարասիք մը չէ, իսկ տաւարներն ալ շատ անգամ քաղաքացիներէ կամ քիւրդերէ կիթ կամ փոխ բերուած են, իրենց տղայոց գոնէ թանապուր մը կերցնելու յուսով։

Անցեալ տարի վ.եհ. Կայսրը տեղւոյս կարօտութիւնը լսելով, 10000 քիլօ արմտիք բաշխելու հրաման ըրաւ. բայց անգործադրելի մնացած ըլլալով, տարւոյս աւելի սաստիկ կարօտութեանց հանդէպ ևս փոխանակ դարման խորհելու, քսան տարուան պաքայէները խստութեամբ հաւաքելու կը ձեռնարկի, առանց մինչև իսկ միտ դնելու այդ առթիւ եղած հրահանգներուն և տրուած դիւրութիւններուն։ Իսկ յետնեալ տուրքերը մեծաւ մասամբ այնպիսեաց մօտն են, որոնք կամ նախորդ դէպքերու ատեն մեռած են կամ գաղթած և կամ բացարձակապէս անկարող են. բայց ասոնց բոլորի պարտքերն ալ գիւղէն կը պահանջին ամբողջովին։

Արդ, Սրբազան հայր, այս պարագային ինչ ընելիքնիս չը գիտենք. սովեալ ժողովրդեան հացը մտածենք, եթէ ոչ տուրքը։ Ուստի արժան դատեցինք խնդիրը ձեր Ամեն. Սրբազնութեան բարձր ուշադրութեանն ներկայացնել վերստին և խնդրել որ՝

ա. Վանայ ժողովրդեան հացի այս ծանր տագնապը շնորհ ընէք կայսեր. բարձր գթութեան ներկայացնել և խնդրել Նորին Կայսեր. Վեհափառութեան բարձր Շնորհը։ Թէև հրաման եղած է որ 2000 տեղական համաձայն գիւղացոց ոմանց անունով նշանակուած թէմէթաւի և աղքատաց տնակներու կալուածական տուրքերը շնորհուած են, ինչպէս նաև գիւղացւոց խմբովին գնած տասանորդական տրոց մնացորդ գումարներն. իսկ զինուորական տրոց ցանկերն ևս ըստ նախորդ կայսեր. իրատէին սրբագրելով, մնացեալ տրոց գումարներն չորս տարուան պայմանագիրով վճարելու դիւրութիւն տրուած է։

Այս և ուրիշ պատճառներով, ըստ օրինի որոշուած սրբագրութիւնք և յապաւումնք տեղի ունեցած չ՚ըլլալով, յետնեալ տրոց գումարները շատ մեծ քանակութեան կը հասնին, զորս տեղական կառավարութիւն ամենայն խստութեամբ հաւաքելու սկսած է այնպիսի ատեն մը, երբ հացի տագնապ ու սով տիրած է մեծ սաստկութեամբ, և սովեալ ժողովուրդը նպաստամատոյց մարմիններուն դիմում կ՚ընէ ի խնդիր հացի. իսկ այս պարագային հարկահաւաք-պաշտօնեայք, գիւղերու մէջ մանաւանդ, անհատներու պարտքը չը ճանչնալով, յետնեալ տրոց բոլոր քանակութիւնը գիւղի

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ Վանայ, 5 փետրուար, 1907
Համար 85

Ամենապատիւ Տ. Մաղաքիա Սրբազան Արք. Եպիսկոպոս Բարձրաշնորհ Պատրիարք Հայոց,

ի Կ. ՊՕԼԻՍ.

Ամեն. Ս. Հա՛յր,

Նահանգիս Նորընտիր վեհ. կուսակալի տեղ հասնելէն ի վեր, սաստիկ խստութեամբ ձեռնարկուած է յետնեալ (պաքայէ) տուրքերու հաւաքման, ինչպէս որ նախորդ յունվ. 29 թուակիր գրով մը ծանուցինք արդէն։ Նախորդ ծանօթ դէպքերու պատճառաւ պաքայէ տրոց քանակութիւնը մեծ գումարներու կը հասնի. յիշեալ պատճառներէն կարևորներն են.

ա. Դէպքերու ժամանակ բոլոր գիւղերու մէջ ընդհանուր կերպով, իսկ քաղաքիս թաղերու մեծագոյն մասին մէջ կառավարական տրոց բոլոր մազպաթաներն, իլմուխապէրներն և ամէն տեսակ հաշիւները փճացան, այնպէս որ գեղացի և քաղաքացի ժողովուրդը անծանօթ է բոլորովին իր պարտած տրոց քանակութեան, և եթէ կառավարութեան տոմարներու մէջ այդ քանակութիւնը որոշ է, բայց մէն մի անհատի պարտուց քանակութիւնը իսպառ անծանօթ է։

բ. Գիւղացի ու քաղաքացի հասարակութիւնք ի հաշիւ տրոց պաշտօնական վճարումներէն ի զատ, ուրիշ շատ մը վճարումներ ալ ըրած են կառավարական հարկահաւաք-ոստիկանութեան և ուրիշ պաշտօնեաներու պարզ տոմսակներով, որք նախորդ դէպքերու ատեն առհասարակ փճացած ըլլալով, հարկատու ժողովուրդը այժմ տոմսակներով եղած վճարումները ի հաշիւ իր պարտուց հաշուակցելու անկարող կը լինի։

գ. Դէպքերը պատահելէն յետոյ կայսեր. Իրատէով հրամայուեցաւ, որ դէպքերու ատեն մեռնողներու կամ ուրիշ երկիր գաղթողներու զինուորական տուրքին մնացեալ պարտուց գումարը ճշտուելով՝ զեղչուի պատկանեալ գիւղերու կամ թաղերու զինուորական տրոց գումարէն, բայց այդ քննութիւնք և զեղչումները տեղի ունեցած չեն մնաւ։

դ. Երկու տարի առաջ, յետնեալ տրոց հաւաքման համար հրատարակուած հրահանգով, կարգ մը դիւրութիւններ շնորհուած են հարկատու ժողովրդեան, որոյ համաձայն գիւղացոց ոմանց անունով նշանակուած թէմէթաւի և աղքատաց տնակներու կալուածական տուրքերը շնորհուած են, ինչպէս նաև գիւղացւոց խմբովին գնած տասանորդական տրոց մնացորդ գումարներն. իսկ զինուորական տրոց ցանկերն ևս ըստ նախորդ կայսեր. իրատէին սրբագրելով, մնացեալ տրոց գումարներն չորս տարուան պայմանագիրով վճարելու դիւրութիւն տրուած է։

Այս և ուրիշ պատճառներով, ըստ օրինի որոշուած սրբագրութիւնք և յապաւումնք տեղի ունեցած չ՚ըլլալով, յետնեալ տրոց գումարները շատ մեծ քանակութեան կը հասնին, զորս տեղական կառավարութիւն ամենայն խստութեամբ հաւաքելու սկսած է այնպիսի ատեն մը, երբ հացի տագնապ ու սով տիրած է մեծ սաստկութեամբ, և սովեալ ժողովուրդը նպաստամատոյց մարմիններուն դիմում կ՚ընէ ի խնդիր հացի. իսկ այս պարագային հարկահաւաք-պաշտօնեայք, գիւղերու մէջ մանաւանդ, անհատներու պարտքը չը ճանչնալով, յետնեալ տրոց բոլոր քանակութիւնը գիւղի

համայնքէն կը պահանջեն և կարող համարուած անձանց տուները մանելով, դուրս կը հանեն ամեն ինչ՝ կարասի, ուտեստ, կով ու ոչխար, զորս կարենան գտնալ և կիսագնի ծախելով կը գանձեն ի հաշիւ յետնեալ տրոց, թէև այն գիւղացին, որմէ բռնի կ'առնեն գտածնին, բնաւ պարտք ալ ունեցած չըլլայ, կամ առնուած կարասին կամ ուտեստը անոր աւելորդներէն չըլլայ և կամ քաշուած կով ու ոչխարը գիւղացիի սեփականութիւնը չըլլայ, այլ քաղաքացիներէ կամ քիւրդերէ կիթ կամ փոխ բերած ըլլայ։

Սոյն պարագային մէջ անհնար է որ աղքատ ժողովուրդը կարող ըլլայ տարիներէ ի վեր դիզած պարտքը վճարելու, որովհետև ամէն մի գիւղի կամ թաղի պարտքը 1000—1500 օսմ. ոսկիի կը հասնի, որ եթէ նոյն գիւղի կամ թաղի մէջ գտնուած մի քանի կարողներէն կամ կարող համարուածներէն առնուի, ինչպէս կը պահանջի այժմ, ընդհանուր սնանկութիւն մը յառաջ պիտի գայ, ինչ որ հակառակ է բնաւին Կայսեր կառավարութեան համբաւեալ արդարասիրութեան ու նաև երկրի ընդհանուր շահերուն. իսկ այս պարագաները բաց ճանչնալով՝ նախորդ վսեմ. կուսակալն յետնեալ տուրքերու հաւաքումը յետաձգած էր ցայսօր։

Այս պարագաները ու ընդհանուր տեսութիւնները ներկայացնելով Ձեր Ամեն. Սրբազնութեան բարձր ուշադրութեանն, կը խնդրեմք ներկայացնել զանոնք Կայսեր. բարեխնամ կառավարութեան բարեհաճ նկատառութեան և յետնեալ տուրքերու շնորհումը խնդրել բացարձակ անկարողներու համար։ Իսկ հակառակ պարագային, եթէ յապաղեալ տրոց սոյն խիստ գանձումը շարունակուի և անկարողներու բաժին տուրքը կարողներէն կամ կարող համարուածներէն պահանջուի և առնուի, կը վախցուի որ ծանր հետևանքներ յառաջ գան, ինչպէս կրօնափոխութիւնք և ժողովրդեան աստանդական ցրումը։ Արդէն գիւղացիք Առաջնորդարանն գալով, այս տեսակ մտքեր կը յայտնեն այժմէն։

Սպասելով Ձեր Ամեն. Սրբազնութեան բարեհաճ նկատառութեան և տնօրէնութեան,

Մնամք խորին որդիական յարգանօք՝

(Սեորագրութիւն)

ԹԻՒՐՔ ՅԱՐԺՈՒՄԻ ՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԱՐԻՆ, 22 մարտ

Կառավարութիւնը Թիւրք ժողովրդի դիմադրութեան դիմաց զիջեց։ Այս զիջումը, իր դիւանագիտական յարաբերութիւններու մէջ ըրած զիջումներու պէս, յայտնուեցաւ շնորհքի բողով ծածկուած, այսինքն՝ Ն. Կ. Վ. Սուլթանը իր մշտաբուղխ բարձր հոգածութեամբ, նկատի առնելով իր հաւատարիմ հպատակներու վիճակը՝ հետևեալ շնորհքները բարեհաճեցաւ բաշխել.

ա. Կը ներէ յանցանքը անոնց, որոնք հոկտեմբերեան խառնակութիւններու միջոցին մարդասպանութիւն գործեր էին, բ. Կը ներէ աքսորի դատապարտուածներու պատիժը, գ. Կ'ազատէ կենդանիներու տուրքը 10-էն 3 դահեկանի և դ. Կը հրահանգէ անձնական տուրքը (շախսի վերկի) գանձել միմիայն հարուստներէն և այն ալ քիչ քանակութեամբ։

Կառավարութիւնը կը յուսար որ այս շնորհքը, հեռագրով հաղորդուած վալիին, անմիջապէս պիտի անհետացնէ ժողովրդի դժգոհութիւնը, և կազմակերպուած ընդդիմադիր տարրը ուրախութեամբ ընդունելով կայսերական այս անսահման շնորհքը, ամեն բան իր նորմալ վիճակը պիտի ստանայ. բայց ո՞վ պատրանք... ժողովուրդը ամենայն անտարբերութեամբ և մինչև իսկ արհամարանքով վերաբերուեց դէպի այս „գերագոյն" շնորհքները. նա ոչ միայն այս տուրքերու բոլորովին վերցիլը կը պահանջէ, այլև տրամադիր է ընդհանուր ռէֆորմներու պահանջներ դնել։ Ի՞նչ պիտի ըլլայ երկու կողմերու ապագայ բռնելիք ընթացքը. այժմեանէ չենք կարող որոշ բան մ'ըսել։ Թիւրք ժողովուրդը տեսնելով իր ընդդիմութեան դրական արդիւնքը, կը խրախուսի և հետզհետէ համոզում գոյացնելով այս ուղղութեան օգտակարութեան մասին, աւելի պահանջկոտ կը դառնայ, իսկ կառավարութիւնը իր տեսակի մէջ եզակի այս շարժումէն կատաղած և միևնոյն ատեն շլարած՝ դեռ կը վարանի կտրուկ և վերջնական քայլ մը առնելու։ Եւ այսպէս դրութիւնը կը բարդի, մտքերը կը յուզուին և օրէօր կը սպասուի աւելի բուռն, աւելի ծանրակշիռ դէպքերու։

Այս բոպէիս լսեցինք, որ Տրապիզոնի զինուորական ընդհանուր հրամանատարը զարնուած է։ Կուսակալը շատ մեծ երկիւղ ունի. դուրս չելլեր։

—

ՏՐԱՊԻԶՕՆ, 24 մարտ

Տրապիզոնի վիլայէթին կուսակալ Ռէշատ պէյ, որ թմրած, արբեցող բոլորովին անպէտք դարձած մարդ մ'է, աւելի բարձր թոշակով Գօնիայի նահանգին վալի կը նշանակուի և կը մեկնի Պոլիս, ուր կրկնակի գնահատելով իր ծառայութիւնները, առանց Գօնեա գնալու՝ Ռումելիի մէջ Ագրիանապօլսի վալիութեան կը կոչուի։ Ռէշատ պէյ ոչ միայն մեր վիլայէթին ոևէ մէկ գործին վրայ մտածած չէր, այլև իրեն ներկայացուած խնդրագրերն անգամ անձամբ հէվալէ չէր ըներ, և եթէ երբէք իր գրով հէվալէ պատահէր, շատ անգամ փոխանակ պատկանեալ պաշտօնատան հէվալէ ընելու, սխալ տեղ մը կը յանձնարարէր։ Անգամ մը իր վրայ պահանջ ունեցող մը, ճարը հատած, խնդրագիր մը ուղղակի իրեն կուտայ և դրամը կը պահանջէ, մեր թմրած մարդը առանց կարդալու, թէ ի՞նչ բան է գրուածը, դատարանին կը յանձնարարէ։ Սակայն ընթերցողը թերևս մտածէ թէ ուրեմն ի՞նչ բան կայ, որ ասանկ մարդ մը քանի մը օրուան մէջ կը յաջողի երեք կուսակալութիւն փոխել. ատիկա շատ պարզ է համիդեան ռէժիմին ծանօթ եղողներուն. նա Սապէյնի պաշքեաթիպ թահսին փաշային պաշտպանեալն է, և յայտնի բան է, թէ մեր երկրին մէջ պաշտպանութիւն վայելելու համար ընդհանրապէս ի՞նչ միջոցներու պէտք է դիմել. ո՞վ գիտէ թէ տարեկան ի՞նչ խոշոր գումար մը կը վճարէ թահսին փաշային. քանի մը ամիս առաջ ալ մի գեղանի չէրքէզուհի խրկեց յիշեալին՝ իբր նշան իր անկեղծ հաւատարմութեան։ Ասոնք սովորական բաներ են մեր կեանքին մէջ։ Անոր տեղ նշանակուած Զիյվէր պէյ, որ դատական նախա-

բարութեան մէջ 38 տարիէ իվեր կրօնից տեսուչ էր, գալով գործի ձեռնարկեց. թէև այժմէն չէ կարելի որոշ կարծիք յայտնել սակայն այնպէս կը թւի թէ Զիլվեր պէյ իր նախորդին նման մեռած մարդ մը չէ. տեսնենք։

Կուսակալի փոփոխութեան յաջորդեց զինուորական հրամանատարինը, սակայն ասիկա եղերական ձևով մը։ Ամսոյս 2-ին, ուրբաթ օր, ահագին բազմութիւն մը իսլամ հաւատացեալներու, կառավարութեան շէնքին մօտ գտնուող մզկիթին մէջ ցերեկուան նէմազը ընելով, երբ դուրս կելլէր, զինուորական միւլազիմ Հաճի էֆէնտի կը մօտենայ հրամանատար Ֆէրիգ-Համդի փաշային և անկէ բան մը կը խնդրէ։ Փաշան արհամարական շեշտով մը կը պատասխանէ և ահա Հաճի էֆէնտի անմիջապէս կ'ուղղէ ատրճանակը Համդի փաշային դունչին և մէկ հարւածով գետին կը փռէ տակառանման փաշան. երկրորդ գնտակ մ'ալ գետինը պարպելով՝ կաշխատի ճամբայ բանալ, սակայն անգիտակից թիւրք խուժանը պաշարելով կը բռնէ զինքը։

Հրամանատարը կառքը դրելով տուն կը փոխադրուի, ուր դեռ չը հասած՝ վերջին շունչն ալ կը փչէ և յաջորդ օրը հանդիսատեսներու հոծ բազմութեամբ մը կը թաղուի Նախորդ վալի Գագրի պէյի մօտ, որու գործակցութեամբ սարքեցին 1905-ի կոտորածը և հարիւրաւոր անմեղ հայերու կեանքը ոչնչացնելով՝ այնքան ընտանիքներ խեղճութեան ու թշուառութեան մատնեցին։

Թիւրք կեանքին մէջ հազւագիւտ յանդգնութեան այս օրինակին շարժառիթը ի՞նչ էր արդեօք։ Միւլազիմ Հաճի էֆ. Երզրումցի, 35-40 տարու, չերքէզ հազարապետի մը որդին է։ Իբր յիսնապետ, իր թոշակը, թայինով միասին, հազիւ երեք օսմ. ոսկի կը բռնէր, միայն թէ իր հօր մահուան հետեւանքով մօրը յատկացուած թէգաւիդի ամսականով միասին բազմանդամ ընտանիքը հազիւ ապրուստ մը կընէր, և երբ մօր 18 ամսականը, իրեն ալ 5—6 ամսականը անգանձելի մնան, ի՞նչով ապրեցնէր ընտանիքը։ Միշտ կը դիմէ կառավարութեան, օգուտ չ'ըներ. Պոլիս կը հեռագրէ, հրաման կուգայ որ անմիջապէս վճարուին իր ամսականները. կը վճարեն միայն մաս մը. արդէն այդ հրամանները աչքի փոշի փչելու համար են. մէկ կողմէն ատանկ հրամաններ կուտան, միւս կողմէն պատրաստ դրամը Պոլիս կը քաշեն։ Վերջապէս սպանութեան դէպքէն տաս օր առաջ, երբ կրկին կը մերժուի, կառավարութեան հաշւակալութեան միւմէյիզին փառաւոր ապտակ մը կիջեցնէ. կուսակալը զայս լսելուն պէս, խիստ նամակ մը կը գրէ զինուորական հրամանատար Համդի փաշային և անոր պատժիլը կը պահանջէ, որով երեք օր բանտը կը մնայ։ Նա շատ անգամներ իր մեծաւորին՝ Համդի փաշային դիմելով՝ ամսականները կ'ուզէ, կ'աղերսէ, կը թախանձէ, սակայն կուշտը անօթիին մանր կը փրթէ։ Փաշան ոչ միայն ահագին հարստութեան տէր է, այլև իր ամսականները օրըօրին գանձած է. նա կառավարութեան սընտուկէն պահանջ չունի, և այս բոլորը գիտէ խեղճ Հաճի էֆէնտին, որուն դիմումներուն, աղաչանքներուն գօմանտանը միշտ արհամարանքով կը պատասխանէ։ Հաճի էֆէնտի լեցուած այս մտածումներով՝ վերջապէս կը վճռէ սպաննել իր անկարեկիր և անխիղճ մեծաւորը և կը գործադրէ իր վճիռը։

Կուսակալը անմիջապէս նախնական քննութիւն մը կատարելով՝ դէպքը կը հեռագրէ պալատ, ուրկէ հասած հրամանին համաձայն՝ նոյն գիշերն իսկ գնդապետի մը նախագահութեամբ զինուորական դատարան մը կազմելով՝ մահուան կը դատապարտեն յիսնապետը։

Հարցաքննութեան ժամանակ շատ մը հարցումներէ զատ, կը հարցնեն նաև թէ հայ բարեկամներ ո՞ւնի, ո՞րոնք են, վերջերս որ հա՞յին հետ տեսնուած է, և այլն. նոյնպէս ուզած են հասկնալ թէ այս սպանութիւնը արդեօք կապ ունի՞ Էրզրումի խռովարար թիւրքերուն հետ։ Աներկիւղ Հաճի էֆ. կտրուկ կերպով պատասխանած է, թէ աւելորդ են այդ հարցումները, թէ իրեն եղած անիրաւութեան և իր բազմանդամ ընտանիքին թշուառութեան պատճառաւ ինքը տաս օրէ իվեր վճռած էր սպաննել գօմանտանը և հաշւակալութեան պետը, սակայն կը ցաւի որ միայն մէկը յաջողեցաւ սպաննել։

Զինուորական ատեանը իր վճիռը Պոլիս հաղորդելուն պէս, փոխանակ հրաման տալու, որ վճիռը գործադրեն, ոճրին շարժառիթը փնտռել կը հրամայի, և արդարև թիւրք կառավարութեան համար աւելի նպատակայարմար է որ շարժառիթը խելագարութեան կամ նման բան մը դուրս գայ, քան թէ լուրջ մտածման արդիւնք։ Տեսնենք ի՞նչ ձև կուտան գործին։ Ներկայ րէժիմը խեղաթիւրելու, խափելու, կեղեքելու, ճնշելու, ոչնչացնելու րէժիմն է։

Թիւրք դէրվիշ մը, որուն հետ Հաճի էֆ. յարաբերութիւն կ'ընէր, ձերբակալուեցաւ։ Մայրն ալ անմիջապէս Պոլիս մեկնեցաւ իր զաւկին համար աշխատելու։

Թիւրք ժողովրդեան մեծագոյն մասը հաւակրութիւն և արգահատանք ցոյց կուտայ յիսնապետին. շատ քիչերն են որ կը ցաւին Համդի փաշային մահուան վրայ։

Նոր գօմանտանը պիտի գայ Դ. զօրաբանակի կեդրոնէն, Երզնկայէն։

Զը մոռնամ ըսելու, որ գտնուեցան յոյներ, որոնք սպանութեան դէպքը լսածնուն պէս, սկսան խօսիլ թէ գօմանտանը զարնողը հայ է, և ասիկա ըրին՝ թիւրք խուժանը կրկին հայերուն դէմ գրգռելու համար, որմէ իրենք մեծ չափով պիտի օգտուէին, ինչպէս օգտուեցան 1895-ի կոտորածի ատեն, յիմար թիւրքերուն ձեռքէն ոչինչ գնով ծախու առնելով կողոպուտը, ինչպէս և սպանուած կամ նիւթապէս ոչնչացած հայոց տեղերը գրաւելով հրապարակին վրայ։

ՀԱՄԻԴԵԱՆ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՆ, 7 մարտ

Նոր կուսակալը իր պաշտօնի գլուխն անցնելուն պէս, իբրև խորամանկ վարչագէտ (Ցաճկաստանի վարչական ձևերին լաւածանօթ), ուզեց նախ գանձարանը լեցնել, ապա կշտացած պաշտօնեաները գործի դնել։ Եւ անմիջապէս, մինչև այժմ չը տեսնուած գարշելի միջոցներով (բռնութիւն, ծեծ, բանտարկութիւն), սկսեց

գանձել տուրքերը։ Միևնոյն ժամանակ քաղաքի աւելի քան հինգ հազար աշխատաւորուրկ ժողովուրդը և գաւառներու սովալլուկ ազգաբնակութիւնը՝ լեցւած քաղաքի փողոցները, պաշտօնատների սեմերն ու առաջնորդարան. օգնութիւն, գթութիւն կ'աղերսեն, որ սակայն ինչպէս միշտ, անլսելի կը մնայ։ Քաղաքական ժողովոյ անդամներ, ինչպէս նաև առաջնորդական տեղապահ՝ փակւած իրենց պաշտօնատեղերը, ոչ միջոց ունին տառապող ժողովրդեան պահանջներուն բաւարարութիւն մը տալ և ոչ ալ երես ունին դատարկ ձեռքերով անոր դէմ ելլալ ու պատասխանել։ Անելանելի դրութենէն կերպ մը ազատ ըլլալու և սպասելիք անկարգութեանց պատասխանատուութենէ զերծ մնալու համար, ինչպէս Քաղաքային ժողովոյ անդամները, նոյնպէս և առաջնորդական տեղապահը կրկնակի հեռագրերով, փետրուար 12 թւով, իրենց հրաժարականները ներկայացուցին պատրիարքին և ընդարձակ գրութիւններով պատճառաբանեցին իրենց վարմունքը։ Պատրիարքարանը ի պատասխան այդ դիմումներու, հեռագրով հրահանգեց, չը հրաժարիլ։ Բայց անոնք առանց ետ առնելու հրաժարականնին, նորէն գրաւոր կերպով հաստատեցին իրենց կտրուկ որոշումնին։ Քաղաքային ժողովոյ և առաջնորդ. տեղապահի հրաժարական տալը իր դէմ բացարձակ ցոյց մը նկատելով, վալին կատաղած կրկնապատկեց իր խստութիւնները։ Ծայրայեղութիւնը ակնյայտնի դարձածին պէս, բարդութիւններու առաջն առնելու համար, կառավարութեանց հիւպատոսները միացած դիմեցին վալիին և պահանջեցին ծայրայեղ միջոցներու մեղմացումն։ Այդ ատեն միայն վալին զգաց, որ իր գերիշխանութեան մէջ շատ է առաջ գացեր, և ասոր հետևանքը անձնապէս իր համար ոչ այնչափ շահաւոր պիտի ըլլայ, եթէ յանկարծ հիւպատոսները բողոք բառնան Բ. Դռան առաջ, իսկոյն մեղմացաւ և կանչել տուաւ Քաղ. ժողովոյ անդամներն ու յայտնեց, թէ գէշ են ըրեր հրաժարականնին տալով պատրիարքարան, փոխանակ իրեն դիմելու և իրենց ցաւերը յայտնելու, և թէ ինք երկրի անդորրութեան ու բարօրութեան համար եկած է և պիտի աշխատի սովեալներու վիճակը „նկատի առնել" ու յորդորեց ամենքը՝ երթալ և պաշտօնները շարունակել եայլն։

Առայժմ սպասողական դրութիւն է. հարկահանութիւնը գրեթէ դադրած է իր խիստ գոյնը ունենալէ։

—

ԿԱՐԻՆ, 8 Մարտ

Իմացած ենք, գիտենք որ Թիւրք կառավարութիւնը շատոնց միտքը դրած է հայկական հարցը լուծել՝ Հայաստանը պարպելով հայերէն. բայց խնդրեմ ասացէք մեզ, ի՞նչ կը դառնայ ընդհանուր քաղաքականութեան մէջ, որ Թիւրք կառավարութիւնը վերջերս ամէն միջոց ի գործ կը դնէ այս դժոխային ծրագիրը ամենայն արագութեամբ գլուխ բերելու։ Ոչ միայն այս ուղղութեամբ գործը առաջ կը տարւի, այլև Թիւրք պաշտօնեաները չեն քաշւիր յոխորտալ, թէ իրենց հրամայւած է ամեն վայրագութիւն կատարել, որ ըստիպւած դուրս գանք այս երկրէն։ Գիտենք, որ Թիւրք գանձարանը դատարկ է միշտ և միշտ ալ դրամի կարիք կայ. բայց հաւատացէք, որ հարկահաւաքութիւնը միայն դրամ գանձելու միջոց չէ այս դժոխք երկրին մէջ, այլ մի առիթ, մի պատրւակ տանջելու հայ ժողովուրդը, քանդելու հայ օճախը և զզւեցնելով իր կեանքէն՝ փախցնելու զանոնք իր վարած հողէն։

Փաստե՞ր... որքան կ'ուզէք։ Ահա հազարէն մէկը. մէկ-երկու շաբաթ առաջ Իլիճէ հարկահաւաք պաշտօնեաներէն լեցւեցաւ։ Ժողովուրդը աղքատ, զուրկ կառավարական անընդհատ տուրքերուն բաւարարութիւն տալու միջոցներէն. ամէն կողմ ողբ ու կոծ. անդին մէկ գիւղացի՝ Մկրտիչ անունով՝ համարձակութիւնը կ'ունենայ ըսելու. „Մէկ կովէ զատ բան չունիմ, ինչո՞վ վճարեմ ձեր պահանջը", հարւածներ կ'իջնեն խեղճ մարդու վրայ, որ ծեծէն թուլցած կ'իյնայ. միւս կողմէն կէս գնով կը ծախեն իր ապրուստի միակ միջոցը։ Մկրտիչը երբ դառնացած կը պոռայ. „Վերջին ունեցածս ալ առիք, նայենք այսուհետև ալ ի՞նչ պիտի առնէք", ահա Թիւրք պաշտօնեայի պատասխանը. „Ձեզ ամէն կերպ պիտի հալածենք, որ պարտաւորւիք թողնել երկիրը և հեռանալ, որպէսզի Թիւրքեր բերենք բնակեցնենք. անգամ մը որ երկիրը մաքրենք ձեզմէ, այն ժամանակ կը հանգստանանք"։

Ժողովրդի կաշին քերթելով չեն բաւականանար, նպատակին հասնելու համար անոր հոգին պէտք է դաղել. և ահա հայ պատիւն է կը բռնաբարւի, կը լլկւի։ Հայ կինը, հայ կոյսը բռնի կը տարւի և կ'անպատւի։ Վերջապէս ժողովուրդը միջոց մը կը մտածէ— դաւանափոխութիւն կամ, եթէ կարելի է, ընդունել ռուսական հպատակութիւն։ Ո՛չ, դա ալ անկարելի է։ Թիւրք պաշտօնեան շատ ճշդապահ է հայերու ամէն մի շարժումին վրայ հսկելու մէջ. Որոնք են այսպիսի շարժման մը գլուխ կանգնողները, անոնք անմիջապէս կը բռնւին, կը գանակոծւին և կը բանտարկւին։

Կառավարական կամայականութիւնը՝ հայ տարրը հալածելու մէջ՝ շատ անգամ կը հասնի հրէշային չափերու, որու դէմ համբերութիւնը երբեմն կը դառնայ անկարելի։ Ումուտումցի գիւղացիներ կային բանտարկւած քաղաքս. 7 ամիս բանտը պահելէ յետոյ, քննութիւն բացին և երկու տարւայ բանտարկութեան դատապարտեցին. ինչո՞ւ—Նախ՝ որովհետև բանտարկեալներուն հայրը, որ այժմ մեռած է, պատերազմի ժամանակ ռուս կառավարութենէ մեդալ ստացած է եղեր, և երկրորդ՝ 6 տարի առաջ, նոր տարւայ առթիւ շնորհաւորական նամակ մը ստացեր են, որու մէջ նոր և երջանիկ տարիի բարեմաղթութիւնը կայ եղեր։ Ի՜նչ... Մի՞թէ Ն. Կ. Վ. սուլթանի բարձր հովանւոյն տակ հայերը երջանիկ չեն, որ նոր երջանկութեան բարեմաղթութիւն կը ստանան, ապերախտնե՛ր... Խնդրեմ ասացէք, ի՞նչ պէտք է ընել, ծիծաղի՞լ թէ կատաղիլ։

—

ԿԱՐԻՆ, 1 ապրիլ

Նախորդ նամակներուս մէջ այն միտքը յայտնեցի, որ կառավարութեան նպատակը հարկահաւաքութեան գործին մէջ դրամ գանձել չէ միայն, այլ դիւային ծրագիր մը՝ հայ տարրը հեռացնելու իր երկրէն։ Նոր փաստերը եկան աւելի ևս հաստատելու այս միտքը և ապացուցանելու թէ կառավարութիւնը իր նպատակին հասնելու համար կը ստեղծէ միջոցներ, առանց վայրկեան մը մտածելու, թէ իր ընտրած միջոցներու մէջ

կա՞յ արդեօք մարդկային և պետական արժանապատուութեան ու արդարութեան ամենափոքր նշոյլ մը։ Կառավարութիւնը գիտէ, թէ գիւղացին որքան կը սիրէ իր հողը, որքան կապուած է անոր, և որպէսզի կարելի լինի խլել անոր իր երկրի հետ ունեցած ամենահաստատուն կապը, պէտք է խլել անոր ձեռքէն իր հողը։ Միտքը ճիշտ է, ուրեմն պէտք է դիմել նպատակին։ Եւ միջոցներ չեն որ պիտի պակսին անարգ կառավարութեան։

Հարկահաւաքներ, միշտ հոգեառ հարկահաւաքներ, լեցուեր են գիւղեր. կը պահանջեն մեռած, կորսուած, փախած մարդոց և նորածին տղայոց հարկերը։ Ո՞ւրկից տալ։ Միջոցը գտած է ինքը, կառավարութիւնը։ Հարկահաւաքներու մօտ կը տեսնես հարուստ քիւրդեր. երբ գիւղացին այքան ծանր տուրքերը մի անգամէն վճարելու իր անկարողութիւնը կը յայտնէ, հարկահաւաքը կը պատասխանէ. «Ձեր ունեցած պարտքերը այս բէկերը պիտի վճարեն, պայմանով որ յետոյ դուք անոնց վճարէք» և առանց ուշադրութիւն դարձնելու գիւղացոց լաց ու կոծին, քիւրդը կը հանէ քսակը և գիւղացոց ներկայութեանը ոսկիները կը համրէ պաշտօնեային։ Ու երկար չը տևեր—քիւրդը իր վճարածին տասնապատիկ արժէքը ունեցող կալուածները կը խլէ և կ'իւրացնէ։

Շատ պատահած են այսպիսի դէպքեր Խնուս և ուրիշ տեղեր, և անտուն, անապաստան գիւղացիք դիմեր են քաղաք բողոքելու համար. իսկ կառավարութիւնը կը պատասխանէ թէ ոչինչ կրնայ ընել, քանի որ կալուածներու գինը արդէն ստացուեր է։

Այժմ հաստատուած իրողութիւն է, որ կառավարութիւնը որոշեր է Հայաստանը պարպել հայերէն։ Ռուսական հպատակութիւն ընդունելու վերջին գիւղացիական շարժման առթիւ կուսակալը հարցուցեր է Պոլիս թէ՝ կարե՞լի է արդեօք թոյլատրել և ո՞րչափ մարդկանց միանգամ. Պոլսէն հրաման ստացած է՝ թոյլատրել որչափ որ ուզեն, թոյլատրել ամբողջ գիւղերով, գաւառներով, այնպէս որ որքան կարելի է քշացնել հայերու թիւը։ Կեդրոնի այս հրահանգը դեռ գործադրութեան չը դրուեցաւ, որովհետև Ռուսաստանը չընդուներ հպատակաթող հայերը իր երկրի մէջ. ցաւելով պիտի ըսել, որ ամբողջ հայ գիւղացիութիւնը պատրաստ է ձգել իր երկիրը, միայն թէ օտար տէրութիւն մը զինք ընդունի։

—

ՏՐԱՊԻԶՕՆ, 13 մարտ

Փետրուար 18 թուակիր նամակով պատմած էի մեր շրջակայ գիւղերու մէջ վերջին դեկտեմբեր և յունուար ամիսներուն պատահածները։ Ասով ընթերցողները չը կարծեն թէ քաղաքացի հայը հանգիստ ձգուած է, բնաւ երբէք. փոլիսները, լրտեսները գիշեր ցորեկ կը հետևին քիչ շատ կասկածելի դարձած հայուն, անոր ամեն մի շարժումը կը տեղեկագրեն ոստիկանապետ Հիւսէյն Ռուհի էֆէնդիին, որուն բոլոր կարողութիւնը կը կայանայ գլխաւորաբար կաշառք քաշելու գործին մէջ. սակայն նա ունի իր քով խորամանկ աղէս մը, գօմիսէր Հագգը էֆ., որը կը լրացնէ ոստիկանապետին պակասը։ Ասանկ մարդերով կազմուած ոստիկանութիւնը բան գործ ըրած է հայերը ձերբակալել, դրամ քաշել, անցագրի դժուարութիւն յարուցանել, վերջապէս ամեն կերպով հալածել խեղճ հայը, որը, եթէ այսպէս շարունակի ներկայ դրութիւնը, կամաց-կամաց հրէական շատ մը յատկութիւններու պիտի տիրանայ։ Ցաճիկ սրիկաներ սանձարձակ կը շարունակեն իրենց շահատակութիւնները։ Դիշեր մը, նաւավար Պետրոս Տէօքմէճեան երբ կնոջը հետ տուն կը վերադառնար, Թաքսիմ կոչուած տեղը, Թուրք սրիկաներ անոնց ետևէն հրազէն կը պարպեն, սակայն բարեբախտաբար գնտակը կը վրիպի. քանի մը ամիս առաջ ալ Թիւրք սպայ մը խաղի համար օղիին գաւաթը յիշեալներուն տղին գլխուն վրայ դնելով՝ նշան առած և տղան սպաննած էր առանց ոևէ պատժի ենթարկուելու։ Փչացած ոստիկանութիւնը, որ հային համար միշտ արթուն կը հսկէ և ինքը առիթը կը ստեղծէ հայեր ձերբակալելու, բնաւ չի հետևիր՝ ոչ տղան սպաննողը և ոչ ալ ծնողքին վրայ զէնք արձակողը գտնելու համար։

Ուրիշ դէպք մ՚ալ։ Տեղւոյս Մախոխեան յանձնակատարի տունը կը զբաղի նաև իտալական նաւերու գործակալի պաշտօնով. պ. Քրիստոստուր Մախոխեան, որ բաւական ատենէ իվեր Պաթումէն Եգիպտոս անցած էր, կ'ուզէր հոս վերադառնալ ամուսնանալու համար, և Պոլսի կառավարութեան մանաւոր թոյլտուութեամբ, իբր իտալական նաւերու բննիչ, կուգայ Տրապիզոն. սակայն իբր թէ զափթիյէ նէզարէթէն հրամանը դեռ հոս հասած չը լլլալուն համար, յիշեալը գիշեր մը ծովին վրայ կը մնայ. չեն թողուր որ ցամաք ելլէ։ Վերջապէս թէև կը հասնի հրամանը, սակայն գստի պաշտօնէութիւնը և ոստիկանապետը գումար մը կ'ուզեն արգելք չը յարուցանելու համար. անդին Քրիստոստուրի եղբայրը մոռանալով թէ այս „դրախտավայր“ երկրին մէջ կը բնակի, չի համաձայնիր եղած առաջարկին, և թէև կուսակալին հրամանով յիշեալը ցամաք կ'ելլէ, սակայն մեր բարի պաշտօնեաները այս անգամ հարիւր յիսուն ոսկի կը պահանջեն դժուարութիւն չը յարուցանելու համար, ինչ որ բնականաբար կը մերժուի. և ահա չեմ գիտեր ի՞նչ բան կը դառնայ, որ նոյն զափթիյէ նէզարէթէն ուրիշ հեռագիր մը կը հասնի, որով կը հրամայուէր առաջին նաւով Քրիստոստուրը երկրէն դուրս հանելը։ Ասոր վրայ անմիջապէս կ'ընեն պսակը և 30—40 ոսկի տալով՝ կնոջ համար ալ Եգիպտոս գնալու թէզքերէ մը կը հանեն և անմիջապէս նաւ նստելով՝ կը հեռանան հոսկէ։

Իսկ հետևեալ դէպքը տակաւին հանելուկ կը մնայ Տրապիզոնի հայուն համար։ Առտու մը, խիստ կանուխ, մեր առաջնորդարանին դուռը կը զարնուի. ծառան երբ դուռը կը բանայ, թէև մարդ չը տեսներ, սակայն դրանը չախչախէն կախուած նամակ մը գտնելով՝ Գնէլ վարդապետ Գալէմքէրեանին կը տանի։ Անցողաբար ըսեմ որ այս վարդապետը Մուշի նախկին տեղապահն է և իբր տարագիր հոս կը մնայ, սակայն մեր ամենագէտ և քաղաքագէտ Օրմանեան պատրիարքը յիշեալը վերջերս նշանակեց Տրապիզոնի ազգ. ժողովներու նախագահ, առանց առաջնորդ, կամ տեղապահ կամ փոխանորդ ըլլալու, որով հիմա կառավարութիւնը աչք ու ականջ կտրած՝ կը հետևի գիտնալու թէ ժողովականներէն որոնք համակիր են և որոնք հակակիր Գնէլ վարդապետին. մեր գործը քիչ էր, գործ մ՚ալ աւել-

ցուցինք։ Դառնանք բուն խնդրին. մեր վարդապետը նամակը բանալով՝ կը տեսնէ որ տաճկերէն գրուած, անստորագիր սպառնական թուղթ մ'է, որով հարիւրական ոսկի կը պահանջի վարդապետէն, Մախոխեանէն, Կայծակ Արապեանէն, Սասթճեանէն, Մարիմեանէն, Կարապետ Մելիք-Մուրադեանէն, Անտոն Փափազեանէն և Հաճի Մինաս Թիւթիւնճեանէն, և սպառնալով որ եթէ կառավարութեան իմաց տրուի, առաջնորդարանը Գնէլ վարդապետին գլուխը պիտի անցընեն և Հայոց վանքն ալ պիտի այրեն։ Մեր վարդապետը առանց ժողով հրաւիրելու, անմիջապէս կը վազէ կուսակալին մօտ և թուղթը կը ներկայացնէ՝ իր անկեղծ հաւատարմութեան ապացոյցը տուած ըլլալու համար։ Կառավարութիւնը կը խոստանայ հետևիլ գործին, սակայն քանի մը օր յետոյ կը լսենք թէ վանքի պարիսպէն դուրս գտնուած շէնք մը գիշերանց այրած են անյայտ անձեր։

Ընդհանուր կարծիքն այն է, թէ ասիկա խումբ մը աւազակաբարոյ թիւրք պաշտօնէից մէկ խաղն է՝ դրամ շորթելու համար, և կամ ենիճուսցի Ֆափգ անուն թիւրք սրիկային մէկ արարքն է։

Ֆափգը, որ բազմաթիւ ոճիրներ գործած և փախստական կ'ապրէր Նոյնիսկ քաղաքին մէջ, շնորհիւ իր պաշտպաններուն, սանսարձակ կը գործէր. նա տեսակ մը կառավարութիւն էր Ենիճուսա թաղին մէջ, ամուսնացողները կ'արձակէր, ուղածը կ'ամուսնացնէր, ասոր անոր լուր խրկելով՝ դրամ կըստանար, ամէն բան կ'ընէր և ձեռք չէր անցներ. սակայն, չեմ գիտեր ի՞նչ ղուգադիպութեամբ, այդ սպառնական նամակէն քանի մը օր յետոյ, մեր նախկին թոյլ կուսակալին մէկ կտրուկ հրամանին վրայ, գիշերանց զափթիէները կը շրջապատեն իր գտնուած տեղը և գնդակով կը սպաննեն զինքը։ Կուսակալին սոյն անսպասելի հրամանին շատ բացատրութիւններ կուտան, և տաճիկները կ'ողբան Ֆափգը, որ իսկապէս ծայրայեղ յանդուգն երիտասարդ մ' էր։

—

ԶՄՇԿԱԾԱԳ, 25 յունուար

Զիւնը սկսած է արդէն մեծ թափով տեղալ. յարաբերութիւնները դադրած են այլ ևս։ Ամեն ոք քաշուած իր տան անկիւնը, բոլորուած իր մխացող օջախի շուրջ՝ անհամբեր կսպասէ գարնան գալստեան։—Քիչ շատ բարեկեցիկ դասակարգը կերպով մը քարշ կուտայ իր կեանքը, իսկ աղքատ ու միայն օրական պարէնով ապրողը բոլորովին զրկուած է իր ապրուստը հայթայթելու միջոցներէն։

Զմրան միակ առաւելութիւնը մեր շրջանի համար այն է որ, ցուրտի և մանաւանդ ձիւնի պատճառով ճամբաները գոցուած ըլլալով, բիւրդն ալ կ'ստիպուի իր կարգին քաշուիլ իր որջը և ազատ թողուլ պահ մը հայը, իր մշտական որսը։

Անկեղծ ըլլալու համար, սակայն, պիտի ըսեմ որ անցեալ 1906 տարւոյն մէջ, բացառաբար և նկատմամբ գէթ նախորդ տարիներու, բիւրդերը այնքան մեծ շահ չ'կրցան ունենալ հայերէն. եթէ չեմ սխալիր, միայն երկու հայ գիւղերու ոչխարները տարին և մի քանի ճամբորդներ կողոպտեցին։

Ասոր պատճառը պէտք է որոնել, վերջերս կառավարութեան կողմէն Պէտրխան փաշայի գերդաստանին դէմ յարուցուած հալածանքին մէջ։—Շամիրի դէպքը, այս կողմերն ալ իր արձագանքն ունեցաւ և այս տեղի քիւրդերն ալ պահ մը յուզուեցան կառավարութեան դէմ, սակայն այս վերջինը իր սուր հոտառութեամբ, շատ շուտ կռահեց խնդիրը և սկսաւ խիստ հսկողութիւն կատարել։ Ամեն կողմ հինգէն մինչև տասը հեծելազօրքէ բաղկացած „գօրտօններ" հաստատուեցան. քիւրտերու քաղաք մուտքը, նոյն իսկ առևտուրի համար, արգիլուեցաւ։ Կառավարութիւնը խստօրէն պատուիրեց հայերուն դադրեցնել ո՛ւէէ յարաբերութիւն քիւրդերու հետ, և անոնք որ տարիներէ ի վեր առևտրական կապերով կապուած էին քիւրդերու հետ, միայն կառավարական անցագրով պիտի կրնային երթալ անոնց մէջ. այս անցագրի խնդիրը սակայն սոսկ տարաձայնութիւն էր և ոչ ոք բաղդը ունեցաւ անկէ ստանալու. այս դրութիւնը հաստատուած էր միմիայն քիւրդերու հետ յարաբերութիւն մշակող հայերը ճանչնալու համար։ Հայերու հանդէպ եղած այդ արգելքը պատճառ եղաւ, որ շատեր քիւրդերու վրայ ունեցած իրենց պահանջը կորուցին, և արհեստաւոր դասակարգն ալ, որ ամառ եղանակին լեռ երթալով քիչ շատ ապրուստ մը կը հայթայթէր, զրկուեցաւ անկէ և ձեռքերը ծալլած մնաց իր տան պուջախը։

Ու այս ամենը հետևանքն էր այն առտառոց կասկածին, որ կառավարութիւն ըսուած հրէշային զանգուածը կը սնուցանէր յանձին հայերուն. նա այնպէս կը կարծէր կամ կարծել կը ձևացնէր թէ քիւրդերու վառօդ և գնտակ փոխադրողը և անոնց նիւթապէս աջակցողը հայերն են, և երբեմն այնքան առաջ տարաւ խստութիւնը, որ արգիլեց ասոնց նոյնիսկ ցորեն և այլ արմտիք վաճառելը քիւրդերուն։

Կառավարութիւնը լաւ գիտէր որ քիւրդը կարօտ չէ երբէք հայուն օգնութեանը. նա քաջածանօթ էր անոր ճարպիկութեանն ու քաջութեանը և քանիցս զգացած էր, իր իսկ կաշիին վրայ, քիւրդին սուրին վէրքը և գնդակին խոցը։—Իրապէս քիւրդը պէտք չէր զգար հայուն օգնութեան, որովհետև ան արդէն գտած էր միջոցը, մեծաքանակ ռազմամթերքը փոխադրելու. „Աղջատաղ"ի իր ցեղակիցները, որոնք ծանօթ են իրենց քաջութեամբ ու մասամբ անկախ Սուլթանի լուծէն, պէտք եղածէն աւելին կը հայթայթէին անոնց։

Դեռ շատ ատեն չեղաւ, երբ Սուլթանի մերկ և անօթի ոստիկանները հանդիպեցան օր մը քիւրդ կարաւանի մը, որ 8 բեռ վառօդ, հրացան և գնդակ կը փոխադրէր, ու խոհեմութիւն համարեցին չ'վրդովել անոնց հանգստութիւնը և գիտնալով մանաւանդ որ այդպիսի բոպէներում քիւրդին հետ կատակ ընելն անկարելի է, „վեհանձնաբար" թողին որ կարաւանը հանգիստ շարունակէ իր ճանբան։ Քանի որ այս ամենը գիտէր կառավարութիւնը, ի՞նչ էր ուրեմն հայերուն հանդէպ ունեցած վերջին խիստ վարմունքը։ Շատ պարզ է։ Այս ամեն շինծու, մտադրուած ու սուլթանական բորբոսնած ուղեղի արտադրութիւնները միակ նպատակ մ'ունէին, այն է՝ հայերու բնաջնջումը, ու այս պիղծ ու գարշելի նպատակին իրագործման համար ոչ մի ջանք կը խնայէր։ Արուեստական սով, տուրքերու բարդում, երթևեկութեան արգելք և յեղափոխական պատրուակի ներքև առոյգ, թարմ ու երիտասարդ ուժերու ֆիզացում, ինչպէս տաճկաստանի բոլոր հայա-

բնակ տեղերը, այստեղ ալ սկսած են հետզհետէ սովորական դառնալ։ Կտոր մը թուղթի համար ձերբակալուած երկու պատանիներ տարիէ մ՝իվեր կը հեծեն Խօջաթի մութ ու խոնաւ զնտանին մէջ, անոք և անխնամ թողլով իրենց խեղճ ծնողքը։

Ահա այսպիսի դրութեան մը մատնուած է մեր շրջանի հայութիւնն ալ, որ շարած՝ միջոց մը կ՝որոնէ պահ մը առաջ դուրս գալու այս դժոխային կացութենէն, միջոց մը որ, դժբախտաբար շատ չուշացաւ ներկայանալու։ Արտագաղթը, որ այնքան առաջ գացած չէր մեր շրջանի մէջ, հիմայ սկսած է համաճարակ ախտ մը դառնալ. Սուլթանի սովալլուկ պաշտօնեաները մի քանի ոսկիի փոխարէն աչք կը գոցեն և ազատ ճամբայ կուտան գնացողներուն։ Չափազանցած չեմ ըլլար, եթէ ըսեմ որ ամառէն ի վեր, մեր շրջանէն 25-էն աւելի երիտասարդներ մեկնեցան դէպի արտասահման, և շատերն ալ գարնան կըսպասեն հետևելու իրենց հայրենակիցներուն։

Արտագաղթ, ահա հայաջնջման ծրագիրին նպաստող միջոցներէն ամենասարսափելին։

ԿՈՎԿԱՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒ, 5 ապրիլ

Ռուսաստանի և մանաւանդ Կովկասի քաղաքական դրութիւնը ոչնչով չէ փոխուել։ Առաջին Դումայի ցրուելուց յետոյ, կամարիլլան աւելի սանձարձակ կերպով ասպարէզ եկաւ։

Զինուորական-դաշտային և Զինուորական-շրջանային դատարանները շարունակեցին կախաղաններով ու համազարկերով վարդ-ծաղիկ կեանքերի մահուան պատժի ոճիրը։ Հարիւրաւորներ էլ փոխանակ ձերբակալելու, որսացուեցին՝ ինչպէս այդ յայտարարել էին ամենազօր զինուորական իշխանութիւնները, որոնք միապետական Ռուսաստանում բազմաբռնապետութիւններ կազմեցին։

Բայց որսացումներն ու Զինուորական դատարանների մահուան պատիժները նսեմանում են պատժողական արշաւախմբերի, էկզէկուցիաների կատարած ու կատարող սխրագործութիւնների հանդէպ։

Խայտառակ նահանջներով ու վատոգի անձնատուութիւններով հռչակած հերոսները իրանց բանակներով վերադարձան հեռաւոր Արևելքից, և բռնապետութիւնը աւելի քան ուժեղ զգաց իրան յեղափոխութեան հանդէպ։

Քանի դեռ բանակը հեռաւոր Արևելքից չէր վերադարձել, թրքական վոհմակներն էին՝ որ մղում էին կովկասեան բազմատանջ հայ ժողովրդի վրայ, որի անսպասելի առնական ինքնապաշտպանութիւնը ատամներ կճրտացնել տուեց խաւարի ու բռնապետական տարրերին։

Մօտ երկու տարուայ թրքական ընդհարումները զբաղկել էին գլխաւորաբար հայ ժողովրդին ցաներլու, քաղելու հնարաւորութիւնից, և սովը իր ահեղ ժանիքներով սպառնում էր ու սպառնաց ընդհարման աւերումներին ենթակայ հայկական գաւառներին։ Բայց, նոյնիսկ միջնադարեան բռնապետութիւնների պետական-կառավարչական ձևերը գերազանցող, ռուսական խելագար կամարիլլան՝ փոխանակ սովեալներին որևէ կերպով օժանդակելու կամ օգնելու, պատժողական արշաւախմբերով, էկզէկուցիաներով, բազմագիմի տուգանքների սահմանումներով մտաւ հայկական գաւառները, կողոպտեց, յափշտակեց, թնդանոթի, համազարկի բռնեց, այրեց ու աւերեց ինչ որ մնացել էր հայ շինականի կիսականգուն և փուլ եկած խրճիթներում։

Ճիշտ է, թուրքերն էլ ազատ չը մնացին պատժողական արշաւախմբերից, էկզէկուցիաներից, բայց կարծես նրանց վերաբերմամբ հատ ու կտոր կատարուածները միայն ցոյցի համար էին, և հէնց որ մի տեղ մի թուրք գիւղում նշանակուեց էկզէկուցիա կամ տուգանք, դրա կողքին մի քանի հայ գիւղերում կրկնապատիկ ու եռապատիկ նշանակուեցին, կարծես թրքական հօրդաների, բէգերի խաթրը շինելու համար. մի գո՞ւցէ նրանք մի օր էլի պէտք կը գան, ու սրտնեղած կը հրաժարուեն իրենց ծառայութիւնը մատուցանելուց։ Ասում ենք՝ կարծես, բայց աւելի շուտ պիտի ասել՝ վստահաբար, որովհետև ամեն անգամ երբ մի տեղ թրքական տարրի վրայ որևէ ճնշում էր գործ դրուում, իսկոյն թուրք ազդեցիկների սպառնական հեռագիրները հասնում էին փոխարքային, որպէսզի ճնշման հեղինակները պատժուին կամ հրաժարեցուին պաշտօնից։ Եւ բացառութիւններ չեն՝ որ բաւականութիւն է տրուած նման սպառնալիքներին ու պահանջներին։ Մինչդեռ հազարաւոր թրքական հրոսախմբեր Լէլախից սկսած բռնել էին Շուշայ ճանապարհը, Ղարաբաղը կտրել էին արտաքին աշխարհից և սպառնում էին սովով ընկճել ինքնապաշտպանութեան հայ մարտական խմբերին, հայ ժողովրդին. մինչդեռ ժողովրդի ու նրա ներկայացուցիչների դիմումները անհետևանք ու անուշադիր էին մնում մի կերպ պաշար հասցնելու համար, ահա՛ այդ ժամանակ կօզակների հովանաւորութեան տակ սայլերով առատ պաշար էին հասցնում թուրքերին. Ասկերանի մօտերքը առաջ անցնող ու այդ սայլերից պաշարի բաժին վերցնող հայ մարտիկների կատարած անձնուիրութեան վսեմ գործը աննկարելի ոճիր էր համարուում, և այդ վսեմ գործին մասնակցող Դաշնակցականներին հալածում, հատ-հատ ձերբակալում և զինուորական դատարանին էին յանձնում։

Ռուսական զառամեալ բռնապետութեան սխրագործութիւնները չեն վերջանում ազատագրական շարժման դէմ դաւադիր ու ոճրագործ շահատակութիւններով։ Դէպի օտարացեղերը, դէպի ծայրագաւառները իր հալածական ու մարդատեաց քաղաքականութիւնը շարունակում է աւելի ցայտուն կերպով։

Բազմաթիւ նահանգներ՝ սովի ճիրաններին են ենթարկուած, որոնց շարքում և Կովկասեան հայաբնակ գաւառները։

Այս անօրինակ ու անհաւատալի վայրենի, գազանաբարոյ գործելակերպը նուիրագործեցին մեզ բախտակից մահմեդականները՝ իդէալ իրենց վերածնութեան „ղեկավար“ գործիչների։ Թիֆլիզի Շէյխ-Իսլամը միամտութիւն էր ունեցել միանալ Թիֆլիզի հայոց թեմական առաջնորդի դիմումին, առաջարկելու համար,

որպէսզի Հայ և Թուրք հասարակութիւնների կողմից պահանջ դրի պատշաճաւոր իշխանութեան առաջ՝ սովեալ գաւառներին պետական օգնութիւն հասցնելու։ Բայց թուրք „գործիչները“ այդ ամենաբնական առաջարկի մէջ էլ Հ. Յ. Դաշնակցութեան ուրուականը տեսան։ Ենթադրեցին, որ Հայ ժողովրդին թրքական հօրդաների դէմ կազմակերպող, ընդհանուր կոտորածից ազատող Հ. Յ. Դաշնակցութիւնը այդպիսի ոլոր մոլոր միջոցներով էլ ուզում է ազատել Հայ ժողովրդին սովի կոտորածից։ Դա կը լինէր, ուրեմն, մահմեդականութեան ինքնասպանութիւնը։ Կամ Հ. Յ. Դաշնակցութեան մահւան պատիժն ու գործադրութիւնը և կամ սովի դէմ օժանդակութիւն ստանալուց հրաժարում։ Եւ իրենց տեսակի քաղաքակրթութեան պօլիտիկոսները նախամեծար համարեցին վերջինը և ինքնաբուական կերպով իրենց օրդաններում հրատարակեցին այդ բանը։

Անկասկած, Կովկասեան մահմեդականութեան տիրապետող շիա մասսան կողոպուտից ու մոլեռանդ ջհաթիից դրդուած՝ կոյր գործիք էր բռնապետութեան ձեռքում, իսկ այդ մասսայի, թրքական հօրդաների ինտելիգենտ ու ոչ ինտելիգենտ ղեկավարները իբր թէ կոյր գործիք չէին ուզում լինել։ Նրանք նախ գիտակցաբար աշխատեցին օգտուել բռնապետութեան տրամադրութիւնից։ Ցոյց տալով իրանց կոյր ու հլու ծառայութիւնը բռնապետութեան, աշխատում էին նրա տրամադրութիւնը ծառայեցնել իրանց սեփական շահերին։ Եւ հոգեվարքի տենդով բռնուած բռնապետութեան համար դրանցից աւելի ի՞նչ ցանկալի ու հաճոյակատար դաշնակից։ Կովկասեան իշխանութիւնն էլ փոխադարձաբար օգտւում էր թուրքերի մթնած տրամադրութիւնից, այն իր շահերին ծառայեցնելու համար։

Կառավարական խորամանկութիւնը, ակներև է, գերազանցեց թուրք պօլիտիկոսների քաղաքականութիւնից։ Նա կարողացաւ խաբխբուկներով ու երկու ժողովուրդներին իրար վրայ ձգելով՝ ժամանակ շահել, մինչև որ կը հասնէին հեռաւոր արևելքից պլաստունների, կօզակների զօրաբաժինները, մինչև որ զէնքի տակ առնէին Թալանի ու կողոպուտի հրաւէրով հմայւած մը-նացորդ պահեստի գնդերը։

Եւ մահմերձը կենդանացաւ։

Իսկ իր կենդանութեան հետ Կովկասը հեղեղեց գուրիական սպանդանոցներով և հայ ու թուրք գիւղերի աւերումներով։

Թուրք մասսան, աւելի շուտ քան իր քաղաքագէտները, հասկացաւ իր խաբուած լինելը ու ըմբոստութեան նշաններ ցոյց տւեց իրեն դէպի սպանդանոց առաջնորդող շէֆերին։ Սակայն վերջինները անուղղելի են և չեն ուզում տեսնել այն խոր վիհը, որի եզերքին են հասել ու ամեն ջանք գործ են դնում իրենց ետևից քաշելու և տգէտ ամբոխին, որ որչափ և փորձւի, դարձեալ մնում է նոյն տգէտը, նոյն իներտ ոյժը, որ թերևս սխալն ունենայ նորից գայթակղելու ու նորից իր հօտային ինստինկտներին անձնատուր լինելու։

Գարունն եկաւ, և թուրքերի սար բարձրանալու ժամանակը մօտենալու հետ բազմաչարչար հայ ժողովրդի սրտերը դողդողում են նոր ընդհարումների սարսափով և ուրուականով։

Վաղն ի՞նչ է սպասում մեզ, ոչ ոք այժմեանից չի կարող պատասխանել։

—

ԱԳՈՒԼԻՍ, 26 մարտ

Մեր շրջանի գրութիւնը գնալով վրդովւում է. տեղիք տւողները միշտ թուրքերն են լինում։ Փետրւարին մեր շրջանի (Դողթան գաւառ) Շոռութ գիւղացիք դալիս են Ներքին Ագուլիսից մի նորահարս տանելու. վերադարձին թուրքերը անյայտացնում են նորահարսին և երեք հարսնքաւորներին։ Մի քանի շաբաթ անյայտութիւնից յետոյ, օգտւելով կառավարութեան անտարբեր վերաբերմունքից, կնոջը պահում են, իսկ երեք երիտասարդներին դաշոյնով անգթաբար յօշոտելուց յետոյ՝ գիշերով բերում և ձգում են իրենց գիւղի հանդում։ Մարտի 12-ին խմբապետ Սարհատը իր ընկերներով յայտնի Սուլէյմանի գիւղի՝ թևի մօտով անցնելիս, թուրքերը հրացան են արձակում վրաները. սակայն մերոնք, ինչպէս որ իրենց հրահանգւած էր, չեն պատասխանում, բարդութիւններ առաջ չը բերելու համար։ Այդ առթիւ շրջանի թուրք գիւղապետը բողոքել է գաւառապետին, իբրև թէ Սարհատը իր խմբով ուզեցել է յարձակում գործել թևի վրայ. հէնց նոր լուր ստացանք, որ գաւառապետը մի գումարտակով Նախիջևանից գալու է մեր շրջանը՝ Սարհատին և նրա խմբին հետապնդելու և բռնելու համար։

Երէկ Ներքին Ագուլիսցի երկու կին, այգում եղած ժամանակ, տեսնում են երկու թուրքեր, որոնք կամաց-կամաց դէպի իրենք են մօտենում. բայց որովհետև այդ կանայք գիւղից բաւականին հեռու գտնւող այգումն էին եղել, այդ պատճառով թուրքերին տեսնելուն պէս սկսում են կամաց-կամաց դէպի գիւղը մօտենալ. թուրքերը հետևում են և արդէն հետապնդելու վրայ են լինում որ բռնեն, երբ սահմանապահ հայ պահակը նկատում է նրանց. թուրքերն իսկոյն ծլկւում են. այսպիսով հազիւհազ են ազատւում լեղապատառ եղած կանայք։

Գարունը բացւել է, սակայն ժողովուրդը կասկածանքով է կպչում իր խաղաղ աշխատանքին. Հայ-թուրքական ընդհարումների ուրուականը միշտ առաջներն է. վերոյիշեալ և ուրիշ նման դէպքեր նախանշաններ են համարում յետագայ բարդութիւնների։ Կառավարութեան բռնած պրովոկատորական ընթացքն արդէն ամեն ինչ լրացնում է։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ՇՈՒՐՋԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Այն պատմական, խոշոր ու նշանակալից շարժումները, որոնք տեղի ունին այսօր հիւսիսային Կովկասեան կայսրութեան մէջ և որոնց վախճանը տակաւին անյայտութեան բաժինն է, համաշխարհային կեանքի վրայ անկասկած պիտի ունենան իրենց խորունկ ազդեցութիւնը և ծանրակշիռ հետևանքները։ Ռուս և եւրոպացի հասարակագէտներն ու նշանաւոր հրապարակախօսները դեռ շատ տարիներ առաջ մարգարէացել են հաւանական արդիւնքները այն մեծագոյն

դրամայի, որի սկիզբներն արդէն իրականութեան սահմաններն են մտել և գործում՝ են մեր աչքերի առաջ։

Արևմտեան Եւրոպայի հասարակական և քաղաքական կեանքի ամենախոշոր ու արմատական խնդիրների լուծումը շատ մոռածողներ թողել են ռուսական յեղափոխութեան, որ՝ գուշակութիւնների համաձայն՝ պիտի լիներ միաժամանակ նաև սոցիալական միակ նշանաւոր յեղափոխութիւնը։

Ընկերվարականները անհատական սեփականութեան ոչնչացումը և հաւաքական սեփականութեան ծագումը այդ օրւայ հետ էին կապում։ Անիշխանականները այդ յեղափոխութեան մէջ էին գտնում պետական կապի տարրալուծման վերջին գործողութիւնը և դաշնակցական ազատ համայնքների ու մանր, անկախ հասարակութիւնների ամենամատահելի սկզբնաւորութիւնը։

Այսքան խոշոր կարևորութիւն էին տալիս մոքի մարդիկ ռուսական շարժումներին և այսքան շատ բան էին սպասում նրանցից։ Եւ ահա մենք նախադրանը այնքան երգւած և այնքան երազած յեղափոխութեան...

Մի կողմ թողնենք սակայն հասարակական և իրաւական կարգերի այդքան արմատական և այդքան հիմնական յեղաշրջումը. դրանք չափազանց յախուռն, չափազանց համարձակ մտածութիւններ են, որոնց իրականութիւնը անհնարին է խիստ ճշտութեամբ ու բաւարար հեռատեսականութեամբ ապացուցանել։ Գիտական այն պաշարը, որ այսօրւայ մարդկութեան տրամադրութեան տակ է, հնարաւորութիւն չի տալիս այդ բոլորը գոնէ գոհացուցիչ պատճառաբանութիւններով նախատեսել։ Չը զբաղուենք, ուրեմն, տիեզերական այդ մեծ պրոբլեմների վերացական խորհրդածութեամբ. մոռանանք առայժմ այն հաւանական հետեւանքները, որ Ռուսաստանի յեղափոխութիւնը կարող է ունենալ ուրիշ երկրների վրայ մասնաւորապէս։

Քննենք այն հարցը՝ թէ Ռուսաստանի յեղափոխութիւնը ազդեցութիւն կունենա՞յ արդեօք Թիւրքիայի վրայ, և եթէ այո՛, ի՞նչ էութեամբ, ի՞նչ մասով ու, եթէ հնարաւոր է, նաև ի՞նչ քանակով։

Այս հարցին պատասխանելու համար՝ նախ և առաջ յիշենք Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մօտիկ անցեալի տխրահռչակ պատմութիւնը Հայկական խնդրի վերաբերմամբ։ Հայ ժողովրդի տառապանքների տարեգրութեան մէջ այդ քաղաքականութիւնը չափազանց սև տառերով է արձանագրւած։ Ոչինչ այնքան անիրաւ, ոչինչ այնքան ստոր, ոչինչ այնքան խարդախ—որքան այդ քաղաքականութիւնը։ Դա այն գերազանցապէս անմարդկային քաղաքականութիւնն էր, որ հարիւր-հազարաւոր գոհերի համար ամենայն սառնասրտութեամբ դերեզմաններ փորեց, կախաղաններ տընկեց, թնդանօթներ կաղապարեց։

Դա արիւնի և երկաթի դժնդակ քաղաքականութիւնն էր, այն քաղաքականութիւնը, որ տասնեակ հազարաւոր Թիւրքահայ գաղթականներին ամենավատթար կերպով, ծեծով ու տանջանքով հալածեց Կովկասից, որ դահիճի բրուտութեամբ խափանեց Կովկասում Թիւրքահայերի համար արւած ամեն օգնութիւն, որ ծանրակուռ սանձ դրեց հայկական խնդրի մասին մտածող ամեն մի յեղափոխական գործիչի լեզուին ու ակտին, որ տաճկական զօրքերի հետ դաշնակցած՝ Կովկասեան սահմանների վրայ մորթել տւեց հայ անձնւէրներին։ Այս էր ռուսական դիւանագիտութեան երէկւայ անարդ ու չափազանցօրէն խայտառակ դերը։

Արդ, հնարաւոր չէ, որ հին կարգերի փոփոխումից յետոյ և այս բոլորը մնան նոյնը։ Անհրաժեշտօրէն ահագին փոփոխութիւն կը կրի նաև Թիւրքահայերի հարցը և այդ՝ անպայման դրական իմաստով։ Այսպիսով մենք ականատես կը լինինք մի նոր ոյժի հանդէս գալուն և մի հին կարգութեան ոչնչացումին։ Թէ առաջին և թէ երկրորդ երեւոյթը մեր դատի տեսակէտից չափազանց նպաստաւոր հանգամանքներ են։

Ռուսաստանի ապագայ լաւագոյն կարգերը մի քանի ուղղութեամբ կընդերգործեն։ Դեռ և առաջ ուրեմն կովկասահայի մասնակցութիւնը չափազանց կը հեշտանայ. իսկ սա մի պարագայ է, որ անհրաժեշտ է առանձին ուշադրութեան առնել, քանի որ—մեր համոզմունքով—տաճկահայկական շարժումները միշտ պէտք է կովկասահայի մասնակցութեան պահանջն ունենան։ Սահմանների մօտիկութիւն, ռազմամթերքի աւելի առատ տեղափոխութիւն, մտաւորականութեան պրօպագանդ—այս բոլորը առաջ կբերեն մի այնպիսի դրութիւն, որի մէջ Տաճկահայաստանը որոշ տեսակէտով կը յարաբերէ Կովկասին այնպէս, ինչպէս Մակեդոնիան Բուլղարիային։ Ազատ Կովկասի կողքին սարուկ Տաճկահայաստանի դրութիւնը շատ երկար չի տևի, մանաւանդ որ ուրիշ նպաստաւոր պարագաներ ևս կը ստեղծուին համաշխարհային քաղաքականութեան մէջ, Ռուսաստանի ազատագրման փառահեղ ակտից յետոյ։

Որո՞նք են ուրեմն միւս նպաստաւոր երևոյթները, երևոյթներ, որոնք ամենքը միասին զուգորդւած պատճառական և հետևական շղթայակցութեամբ՝ պիտի առաջ մղեն Թիւրքահայերի խնդիրը։

Այդ ուղղութեամբ առաջանալիք ազդեցութիւնների մէջ ամենից առաջ պէտք է յիշատակել Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան փոփոխումը Թիւրքիայի նկատմամբ։ Մի քաղաքականութիւն, որ պիտի կարենայ իր սահմանների վրայ կատարւող ամեն տեսակ բռնապետական երևոյթներ չէզոքացնել։ Միջազգային դաշնադրութիւններով Ռուսաստանը—մեր խօսքը անկասկած յառաջադիմական Ռուսաստանի մասին է—պիտի աշխատի ամեն կերպ դիւրացնել իր հարևան Թիւրքիայի քաղաքական և տնտեսական յարաբերութիւնները։ Արդեւքները պիտի վերանան ամեն տեսակ տեղափոխութիւնների ու երթևեկութիւնների առաջ։ Վաճառականական կապերը պիտի չափազանց շատ մտնեն։ Այս փոխադարձ շարժումների մէջ խօսք չը կայ, որ հետզհետէ պիտի արագանայ Թիւրքահայերի ապահովութեան գործը։

Ռուսական յեղափոխութեան ազդեցութիւնը Տաճկաստանի վրայ մի քիչ աւելի լայնօրէն քննելու համար՝ մենք անհրաժեշտութիւն ենք զգում մի քանի խօսքով ու միանգամայն հարևանցի կերպով դիտողութեան ենթարկել այն ազդեցութիւնների խնդիրը, որ նա՝ Ռուսական յեղափոխութիւնը՝ պիտի ունենայ եւրոպական երկրների վրայ։ Ցայտնի է, որ միջազգային քաղաքականութեան հետ շատ սերտ յարաբերութեան մէջ է Թիւրքիան ընդհանրապէս և հայկական հարցը մասնաւորապէս։ Արդ, կը կրի՞ արդեօք որևէ փոփոխութիւն եւրոպական այդ քաղաքականութիւնը Ռուսաստանի վերածնութեան մեծ գործիդ յետոյ։ Եթէ ա՛յո, ապա անկարելի է որ նրա կրած փոփոխութիւնը անհետևանք մնայ հայկական խնդրի նկատմամբ։

Որքան էլ քննադատաբար վերաբերւենք ընդհանրապէս դէպի եւրոպական դիւանագիտութիւնը, որքան էլ կշտամբենք ու արդար զայրոյթով առլցւենք նրա դաւաճան ու խաբէական ընթացքի հանդէպ՝ այնուամենայնիւ տաճկահայկական դատի համար անկարող ենք անտես առնել նրա աջակցութիւնը։ Ոչ ոգևորւենք եւրոպական միջամտութեամբ և ոչ միանգամայն արհամարենք, այլ աշխատենք գնահատել ճշտութեամբ ու արդարութեամբ նրա նշանակութիւնը։ Այսպէս թէ այնպէս նա մի գործօն է, որից կարելի է և պէտք է օգտւել։ Մանաւանդ որ եթէ անաչառ քննութեան ենթարկենք եւրոպական քաղաքականութեան էվոլիւցիան՝ կը տեսնենք, որ նա ամենայնիւ իր զարգացման ընթացքում միշտ շարժւել է դէպի լաւը։ Կեանքի յառաջադիմական հոսանքները և հասարակական կարծիքի ատիճանական հասունութիւնը շարունակ ազդել են պարլամենտների վրայ՝ տաճկահայկական խնդիրը միշտ թարմ պահելու։ Մեծ չէ անկասկած այդ ազդեցութիւնը և շատ բան չէ արւել այդ ուղղութեամբ՝ սակայն նա գոյութիւն ունի և լայնանում է հետզհետէ։ Մտաբերեցէ՛ք, թէ ի՞նչ խայտառակ, անարժան արտայայտութիւններ ունեցաւ ֆրանսիական արտաքին քաղաքականութիւնը Թիւրքահայերի խնդրում, Հանսօտի ժամանակ, 1895—1896 սև թվականներին. մտաբերեցէ՛ք այդ տխրահռչակ քաղաքականութիւնը և համեմատեցէ՛ք Թէկուզ Դելկասսէի չափաւոր ու վերապահ քաղաքականութեան հետ։ „Մի երկրում, ուր բացակայում է ամենատարրական արդարութիւնը՝ յեղափոխութիւնն անխուսափելի է ու անհրաժեշտ։ Հայերը չեն կա-

րող չ՚ապստամբել"... Այսպէս էր խօսում ինքը Դելկասէն ֆրանսիական պարլամենտում. այդպէս էին մտածում նաև Իտալիայում ու Անգլիայում:

Ու մինչդեռ Անգլօ-Սաքսոն և Լատին ցեղերի այս երեք մեծ երկիրները՝ հաւատարիմ իրենց ազատասիրական վաղեմի աւանդութիւններին՝ աշխատում էին ամեն կերպ աջակցել հայկական խնդրի լուծման, այնտեղ հիւսիսում, սլաւօ-գերմանական երեք մեծ երկիրները, պահպանողականութեան և յետադիմութեան այդ կայսրութիւնները ամեն կերպ արգելք էին հանդիսանում: Եւ այս պայքարը ոչ թէ միայն հայերի ազատագրութեան հարցում, այլև քաղաքական բոլոր խնդիրներում: Այսպէս էր երէկ. վաղը սակայն, ռուսական միապետութեան անկման օրը, այդպէս չի լինի: Բռնապետական և պահպանողական հին ոյժը վերջիվերջոյ պիտի խորտակւի ժողովրդական դրոհների առաջ.—Վիլհելմների ու Բիսմարկ-Բիւլօվների արկածախնդիր քաղաքականութիւնը վճռական հարուած պիտի ստանայ Ռուսաստանի յեղափոխութեան շնորհիւ: Եւրոպան դուրս պիտի գայ հին իշխանութիւնից և պրօլէտարիատը պիտի հսկայական նուաճումներ անի: Այսպէս է լինելու իրերի ճակատագրական ընթացքը... Ու քանի որ բանւորական կուսակցութեան ներկայացուցիչները—Ժօրէս, Պրէսանսէ, Վանդերվելդ, Բերնշտայն—միշտ պնդել են պարլամենտներում եւրոպական միջամտութեան անհրաժեշտութեան վրայ հայկական խնդրում, շատ բնական է, որ նրանք վերստին իրենց ձայնը կը բարձրացնեն վաղը, աւելի նպաստաւոր պայմաններում, ուրեմն և աւելի մեծ ոյժով: Եւ այս անգամ նրանք աւելի մեծ յաջողութիւն կարող են ունենալ:

Քաղաքական և հասարակական այս նպաստաւոր հանգամանքները զուգորդուելով և յարակցելով միմեանց հետ՝ առաջ կը բերեն մի խոշոր ոյժ, կ՚արդիւնաւորեն մի հաւաքական եռանդ, որի գործունէութիւնը ամեն կերպ կ՚ազդէ Թիւրքիայի վրայ և որի ընթացքում առաջ կը մղւի հայկական արիւնոտ խնդրի լուծումը:

Ահաւասիկ այս է այն երկրորդ ուղղութիւնը, որով պիտի ներգործէ Ռուսաստանի յեղափոխութեան ազդեցութիւնը թիւրքահայկական ժողովրդական դատի նկատմամբ:

Կայ նաև այդ ազդեցութեան մի երրորդ ուղղութիւնը, որ շատերի կարծիքով գուցէ ամենից վստահելին ու իրականն է և շատ ուրիշների կարծիքով՝ ամենից աւելի կասկածելին ու ամենից նուազ իրականը: Դա այն է, որի վրայ պնդում էին դեռ շատ վաղուց՝ տեսականով ոգևորւող և իրականութիւնից հեռու ապրող անձնաւորութիւնները. այն, որի գործադրութիւնը այնքան փորձեցին Դաշնակցութեան մարտիկները իրենց ամբողջ կեանքի ընթացքում և որից դժբախտաբար, գոնէ մինչև հիմա, գրեթէ ոչ մի դրական արդիւնք չը քաղեցին: Դա հայերի և Տաճկաստանի միւս բոլոր ժողովուրդների միահամուռ յեղափոխութիւնն է—ընդհանուր օսմանեան յեղափոխութիւնը,—որի ժամանակ բոլոր ճնշուած ազգերը ամենքը միասին, ձեռք-ձեռքի տուած ու եղբայրօրէն, պիտի դիմեն դէպի ոճրածարաւ Վիշապի արիւնաներկ գահը՝ քարուքանդ անելու հարիւր-հազարաւոր մորթոտուած դիակների, փշրուած գանգերի, ճարճատուած ոսկրների վրայ կառուցուած այդ սևաւոր ու զազրելի ապարանքը: Այդ օրը միայն պիտի վախճանը տրւի հայկական նահատակութեան այնքան սրտաճմլիկ և այնքան սարսափելի ողբերգութեան: Եւ որպէսզի շուտով այդ ամենը կատարւի, պէտք է ամենքը՝ նրանց հետ միասին նաև տաճկահայերի մի աչքի ընկնող մասը՝ առայժմ մի կողմ թողնեն միւս բոլոր ձևերը, տաճկահայկական կռւի միւս բոլոր եղանակները—թէ ապստամբութիւն և թէ եւրոպական միջամտութիւն—և միանգամայն փարւեն Ռուսաստանի յեղափոխութեան: Մի յեղափոխութիւն, որի անմիջական հետևանքը անկասկածելի կերպով ու անհրաժեշտօրէն պիտի լինի տաճկական յեղափոխութիւնը չափազանց արագ, չափազանց կարճ ժամանակում, գուցէ նաև ռուսական միապետութեան անկման հետևեալ օրը:

Այսպէս են խօսում շատերը ու այս ուղղութիւնն են միայն կամենում շարժման մէջ դնել տաճկահայկական դատի վերաբերմամբ:

Բոլորը գեղեցիկ, բոլորը ցանկալի:

Սակայն... թող ներւի մեզ մի փոքր վերապահութեամբ դիմաւորել այդքան գեղեցիկ և այդքան երազական ապագային: Խնդրի կարևորութիւնը այդ է թելադրում:

Ո՞րքան ճշմարիտ են այդ ամենը, ո՞րքան հաւանական և ո՞րքան ապահով—այս է էականը, որին պէտք է չափազանց մեծ խնամքով մօտենալ: Տաճկական յեղափոխութիւնը այսպէս թէ այնպէս պէտք է տեղի ունենայ. այո՛, այդ գուցէ ամենքս գիտենք: Սակայն ե՞րբ պէտք է լինի այդ օրը, ժամանակի ո՞ր մասնիկում կ՚իրականանայ այդ նշանաւոր պատմական անցքը: Այս է, որ մտահոգութիւն է պատճառում մեզ. այս է, որի նկատմամբ մենք անկարող ենք դրական որևէ ճշմարտութիւն յայտնել: Գուցէ չափազանց ուշ, գուցէ բաւական շուտ—այդ կախուած է հազարաւոր այլ երևոյթներից, որոնք գոյութիւն չունին այսօր, բայց որոնք կարող են ունենալ վաղը: Մի կողմից պատմական և հասարակական գիտութիւնների այժմեան անկատար վիճակը, միւս կողմից ներկայ իրական դէպքերը հնարաւորութիւն չեն տալիս մեզ՝ գոնէ մօտաւորապէս ենթադրութիւններ անել տաճկական յեղափոխութեան և Թիւրքիայի ընդհանուր վերածնութեան ժամանակի նկատմամբ: Մինչդեռ դա այնքան կարևորութիւն ունի թիւրքահայ դատի մէջ այս կամ այն խոշոր ու հիմնական փոփոխութիւնը մտցնելու:

Տաճկական ընդհանուր յեղափոխութիւնը և նրա հետ կապուած Թիւրքիայի բռնակալական ռէժիմի վախճանը կարող է տեղի ունենալ ռուսական միապետութեան անկման գուցէ տասներորդ օրը, գուցէ քսաներորդ օրը—այդ մասին մենք ոչինչ չը գիտենք: Բայց որ նա կարողանայ իրականութիւն դառնալ ռուսական վերածնութեան հետևեալ օրն իսկ—այդ մասին մենք շատ ենք կասկածում: Ի՞նչ հիմունք ունինք կարծելու, քանի որ թէ պատմութիւնը, թէ բոլոր երկրների սօցիալական զարգացման ընթացքը և թիւրքական պայմանների ամբողջ համագումարը այդ չեն հրահանգում: Ի՞նչ հիմունք ունինք հաւատալու, քանի որ գիտենք՝ որ բոլոր ազգերը չափազանց դանդաղ են հասարակական և պետական մի իրաւակարգից մի ուրիշն անցնում, քանի որ գիտենք, որ բովանդակ Ռուսաստանը իր երկարամեայ գործունէութեամբ, իր հասարակական, տնտեսական և կուլտուրական անհամեմատ աւելի խոշոր զարգացումով քան Թիւրքիան՝ քսաներորդ դարի սկզբում տակաւին մնում էր բռնապետական մի պետութիւն՝ պարլամենտական ռէժիմ ունեցող բոլոր արևմտեան երկրների կողքին: Ի՞նչ հիմունք ունինք կարծելու՝ քանի որ Թիւրքիայում միանգամայն բացակայում են հասարակական, մտաւոր, արդիւնաբերական, տնտեսական և այլ կարևոր ոյժերի այն անհրաժեշտ տարրերը, որոնց համախմբումը միայն կարող է վճռական յեղափոխութիւններ ծնել և պատմութեան մէջ նշանաւոր դարաշրջաններ ստեղծել: Ի՞նչու այդքան վարդագոյն յոյսեր կապել այն երկրի նկատմամբ, որի մէջ հաղորդակցութեան ամենատարրական միջոցներն անգամ իրականութիւն դառնալու համար տակաւին շատ տարիների են կարօտ: Ինչո՞ւ այդպէս ռոմանտիկ լինել հնադարեան այդ դժոխքի վերաբերմամբ, որի մէջ ազգերը իրար միս են ուտում և մարդիկ միմեանց արիւնը ծծում, որի մէջ հպատակ ժողովուրդները կապուած են մի քանի նման հանգամանքներով միայն և բաժանուած շատ աւելի տարբեր շահերով, որի մէջ հայը պիտի մորթւի ամեն օր, աւերւի շարունակ, որպէսզի քիւրդն ապրի: Չէ՞ որ ամենից առաջ այսպիսի ապաղակող աններդաշնակութիւն գոյութիւն ունի այդ երկրի հայ և քիւրդ, քրիստոնեայ և մահմեդական ազգաբնակութիւնների միջև ու չէ՞ որ նախ և առաջ պէտք է այդ աններդաշնակութիւնը և պետական սանկցիայով սրբագործուած սոսկալի անհաւասարութիւնը մէջտեղից վերցնել:

Այսօր մենք հայկական նահանգների վերանորոգութեան խնդիր ենք դրել հրապարակի վրայ. կեանքի ու գոյքի ապահովութիւն ենք ուզում. տարրական արդարադատութիւն ենք պահանջում: Տեսնո՞ւմէք արդեօք, որքան համեստ են մեր ցանկութիւնները: Ու մենք կամենում

ենք նախ և առաջ ստանալ այդ ամենաանհրաժեշտ, այդ ամենակենսական պէտքերը՝ հիմնուած մեր ոյժի և եւրոպական միջամտութեան վրայ։ Մենք յոյս ունինք ձեռք բերելու այդ նուազագոյն պահանջները մանաւանդ այսուհետև, երբ մեր սեփական ոյժը՝ ռուսական ընդհանուր վերածնութեան և Կովկասի ազատութեան շնորհիւ՝ անշուշտ պէտք է մեծանայ ու երբ եւրոպական քաղաքականութիւնը և միջազգային արդարութիւնը՝ հիւսիսային միապետութեան անկուժով՝ անհամեմատ աւելի համարձակ, աւելի խրոխտ ու աւելի մարանչող պիտի դառնայ։

Առ այժմ այսպէս է դրութիւնը, մերկ, բայարձակ իրականութիւնը։ Առ այժմ մենք չ՝ունենք մի այլ գրաւական մեր ժողովրդի վիճակը բարելաւելու, որպէսզի նրա համար մենք մեր դատը մեր ձեռքով թաղենք, որպէսզի խաչ դնենք հայկական խնդիր կոչուած արիւնոտ հարցի վրայ։ Այժմ մենք—առանց մի վայրկեան անգամ մեր դատը մի կողմ դնելու—ամեն կերպ կ՝աջակցենք Ցաճկաստանում կատարուող այս կամ այն շարժումներին. ամեն կերպ հրաւէր կը կարդանք բոլոր ճնշուած ազգութիւններին՝ պայքարել համիդեան անարգ ռէժիմի դէմ. ամեն կերպ յեղափոխական դաշն կը կապենք բոլոր անձնուէր ու անկեղծ կուսակցութիւնների հետ և առհասարակ կանենք այն, ինչ որ ուրիշը դուցէ չ՝անէր մեր անօրինակ պայմաններում։

Մեր հարցը որչափ առաջ գնայ մասնակի կերպով ու մեր յեղափոխական շարժումը որչափ ուժեղ լինի, այնքան աւելի ընդհանուր տաճկական յեղափոխութիւնը կ՝արծարծուի ու կուռ բնաւորութիւն կը ստանայ և այդ բոպէին մենք հայերս առաջինը կը լինենք, որ ամեն ինչ մոռացած՝ դլուխ կը կանգնենք Օսմանեան յեղափոխութեան ու կերթանք մեռնելու առաջին շարքերում...

Որովհետև տաճկական ռէժիմի անկումը դուցէ ոչ դին այնքան ցանկալի չէ, որքան հայերիս։

ԹԵՐԹՕՆ

ՁԵԶԻ ԷՈՐ ԿԸ ԴԻՄԵՄ

Երկրի ժողովուրդին

Ձեզի՞ է որ կը դիմեմ ապառնիի ճամբաներէն վերադարձող հոգիովս Մարգարէի.

Դո՛ւք, որ զրկանքի արահետներուն վրայ ձեր երիտասարդութեան գանգուրները փտտեցիք
Ու շարունակեալ հալածանքի մրրիկներուն մէջ ձեր նայուածքները ժպտաթափ եղան,
Դո՛ւք, որ ընդհարումներու մոխիրներուն վրայ խոտ ու արմատ կերաք ու հողը լցեցիք
Ու բիւրերով ինկածներուն կոպերը փակելով՝ անոնց թումբերուն քով սգաւոր փառքին հետ հսկումի էք կեցած...

Ձեզի՞ կ՝ըսեմ, չ՝ըլլա՛յ թէ սպասումի հորիզոններուն գիշերական ամլութենէն ալ յուսասպառ
Մեր հպարտութեան Վկաներն ու անկախ Գոյութեան անեղծ երաշխիքը լքել ոկրտիք,
Եւ կամ ձեր դուռերը ծեծող ու ձեր ներքաններուն տակ դաշոյններ մացառող լլկումէն ահագնած՝
Թշնամի յարկերուն տակ և կամ հիւրընկալ հեռուներուն վրայ ձեր ուրացումի պատանքը հագնիք։

Չի Եղիսեան դաշտերուն մէջ հսկայ ստուերները մեր նախնեաց, ազատամարտն Հայկի առաջնորդութեամբ
Կախաղաններու, կառափնատներու և բաղխումի հողերուն վրայ Ցեղի խաւարած պայծառութիւններէն
Նոր-Հայրենիքի տիտանեան Արևը կը դարբնեն իրենց հրեղէն բազուկներով լուսացայտ,
Եւ մեր տրտմութեան գիշերները կարաւանուած՝ կ՝սպասեն աւարտին դէպի Մասիս, դէպի ծե՞զ քալելու...

Բայց դեռ մինչև օրը աներկբայ ազատութեան, օրը անդրիական խաղաղութեան և օրը հզօր վերածնութեան,
Սարսափը իր բռունցքը ձեր ճակատներուն վրայ պիտի բլրէ ու արհաւիրքը ձեզ պիտի տապանէ,
Քաղաքները արիւն պիտի անձրևեն ու գիւղերը դիւահար փախուստի անտառները պիտի մնան,
Հարսեր պիտի այրիանան ու մանկիկները փողոցները պիտի մնան ու շուներուն հետ պիտի գիշերեն,
Խելագարներն ու կոյրերը պիտի շատնան ու դազաղներ շալկած աշխարհի վախճանը պիտի մուներեկեն,
Ծերերը իրենց գերեզմանները պիտի փորեն ու քահանաները խորաններուն մէջ պիտի միանան,
Զարհուրանքէն լեզուները պիտի առնուին ու բահերու ողբէն ականջները պիտի խլանան
Ու անկենդան աշխարհը իգուզ շարժեալ մեռելներուն հետ ձեզի համար աղօթքի պիտի կենայ...

Սակայն, չ՝ըլլայ թէ այս բոլորէն երկնչիք ու զանգուածօրէն մահին գթութիւնը քարերէն, ջուրերէն ու պարանոներէն մուրաք,
Չի այդ սոսկաղէպքերը ազդանշանը պիտի ըլլան լեռներուն վրայ վիշապացող վրէժի հեղեղներուն,
Որ Խալկանօրէն վար պիտի խոյանան ահագոչ, որպէս յորձանքը շանթագետերու մահաղղորդ,
Ու աւերակները պահակելով՝ պիտի հողմարշաւեն անոնահանջօրէն ձեր յուսահատութեան թիկունքը ամպրոպելու...

Ահա այդ ատեն մեր կաթողիկէներու, մենաստաններու և վանքերու սգաշունչ զմբէթներուն տակ
Առնական բազուկներ պիտի յայտնուին ու երկարին դէպի ցուրտ պարանները ստրկական աղօթքներուն,
Ու զանգերը միահամուռ պիտի փոթորկեն ղողանջը Վրէժին մինչև խպառ չախչախումը իրենց,
Եւ անոնց մէջ խեղդուած զանգուածային թաղումներու անէծքի ողբերը իրենց զայրոյթը պիտի աւարտեն...

Ու բոլոր ականջները պիտի լսեն, բոլոր լեզուները պիտի աղաղակեն ու բոլոր բազուկները պիտի բարձրանան,
Եւ դէմ-դէմի ու կուրծք-կուրծքի բզկտումը պիտի սկսի ու շարունակուի դիակներու բուրգերուն վրայ,
Ու մոխրի Սերունդը դահճորդներու կոկորդները պիտի ծամէ ատելութեամբ սրած իր ժանիքներով,
Ու արիւնը պիտի թափի ու անոր մակընթացութիւնը գերութեան վերջին Արևը կարմիր պիտի ներկէ...

Ուստի, չ՝ըլլա՛յ որ հայր մը կամ մանաւանդ մայր մը իր զաւկին բարձրացող բազուկը բռնել փորձուի,
Չ՝ըլլա՛յ կ՝ըսեմ, զի Ուխտի դաշոյնին աստղերու պայծառութիւնը ասոնց արիւնէն պիտի մթագնին

Ու անոնց դիակներու վրայէն է որ բարձրացող բազուկները երդումի բանակներուն պիտի խառնուին,
Եւ կամ չ'ըլլայ թէ հարս մը իր փեսային պարտքի քայլերը պատնիշէ, վասնզի պիտի կոխկռտուի...

Զի այդ օրը մինչև յաղթանակ պիտի մոռցուին ամէն սէր, ամէն գութ ու ամէն կապ,
Ու Ցիսուսը պիտի աքսորուի մեր սահմաններէն ու իր Աւետարանը պիտի այրուի,
Հաշիւը պիտի հրամայէ մեր Գունդերուն ու կատաղանքը պիտի վարէ բազուկները հարուածներուն շեշտ
Ու վագրերը պիտի զարհուրին ու իժերը սահմռկին մեր անգթութեան նախճիրներէն...

Եւ վերջապէս, վերջապէս, վերջապէս մենք տէրը պիտի դառնանք մեր կեանքին, մեր բաղդին ու մեր հողերուն
Ու պիտի ոսկեշինենք հայրենիքը փլատակ, հայրենիքը խոպան, հայրենիքը ամայի,
Ու պիտի բանանք եղբայրօրէն մեր անյիշաչար թևերը բովանդակ Ազգերու և Ցեղերու առաջ,
Ու մեր տանիքներէն ու հրապարակներէն տիեզերական եղբայրութիւնը պիտի քարոզենք չորս-ծագերուն։

Սակայն այս ալ ըսեմ, որ նախառաւօտը մեր ազատագրութեան՝ նահատակներուն դեռ հանգիստը չը շեփորուած՝
Մենք բիւր ու բիւր Տարօնի հզօր գինին պիտի խմենք անձնուրացութեան գերեզմաններուն շուրջը
Ու անոնց շուշաններուն վրայ մեր աղջիկները հերարձակ՝ հերովդիատան պիտի պարեն անհունօրէն,
Ու Փառքը մեզի հետ սեղան պիտի նստի ու պիտի խմէ և պիտի համբուրուի մեզի հետ...

Չեզի՞ է որ կը դիմեմ ապառնիէն վերադարձող զինեալ հոգիովս Ցեղայիի...

ՎՏԱՐԱՆԴԻ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Պոլսից եւրոպական մամուլին հաղորդուած հեռագիրները հաստատում են, որ ուժեղ երկրաշարժի հետեւանքով Բիթլիսում շատ տներ են փուլ եկած. 9 մարդ մեռած և 14 էլ վիրաւորուած են։ Բարեբաղդաբար, սկզբնական ցնցումները թեթեւ են եղած, որով և ահաբեկ ժողովուրդը միջոց է գտել շինութիւններից դուրս խոյս տալ։ Ցներում մնացած ընտանի կենդանիները մեծ մասամբ սպանուել են։ Ամբողջ ազգաբնակութիւնը քաղաքից դուրս՝ վրանների տակ է ապաստանել։ Ուսեստի պակասութեան պատճառով թշուառութիւնը ծայրայեղութեան է հասել, առանց այն էլ հարստահարուած ու աղքատացած ժողովրդի մէջ։

—

Journal de Genève-ի փարիզեան թղթակիցը նոյն թերթին ապրիլ 18 թուին մէջ կը գրէ հետեւեալը՝

Վատ լուրեր կը ստացուին Ցաճկահայաստանէն, ուր հալածումի այն սիստէմը որ կանխեց կոտորածները, իր ամբողջ սոսկումին մէջ նորէն կը ծաղկի։ Անատոլիի Արեւելեան մասը՝ Վան, Բիթլիս, Էրզրում և այլն՝ պաշարուած են Ռուսաստանէն հոն ապաստանած հարիւրաւոր միւսիւլմաններով։ Անոնք այն թիւրքմէններն են, որոնք անցեալ տարի յարձակեցան Կովկասի հայերու վրայ և անոնց կողմէն անխնայ ետ մղուեցան։ Պարտաւորուած փախչիլ դէպի օսմանեան կայսրութիւնը, անոնք հոն գտան անգէն հայ ազգաբնակութիւն մը, որոնց վրայ կը կատարեն դիւրին վրիժառութիւններ։

Թրքական իշխանութիւնները այս նորեկներու մէջ կը բաժնեն հայերու սեփականութիւնները։ Անոնք ոչինչ չեն ըներ՝ վերջ տալու համար մարդասպանութիւններու, թալաններու և հայ կանանց առևանգումներու։ Սարսափն ու ասվը նորէն կը տիրեն այնքան աղէտուած այս երկրին վրայ։ Խոշոր ջարդերու մնացուած մէկ դարագլուխը կը կանխատեսի, որովհետև իսլամ տարրը աւելի և աւելի դրգռուած կ'երևի։

Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը թիւրք կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրեց այս կացութեան և անկէ առաջ գալիք վտանգներու վրայ։ Կը յուսան որ միւս պետութիւնները նոյնպէս իրենց դժգոհութիւնը պիտի յայտնեն և սուլթանը ինքզինք պիտի տեսնէ շուտով վճռական Եւրոպայի մը առջև, պատրաստ արգիլելու, ի հարկին բռնի ոյժով, կրկնումը 95 և 96-ի սարսափելի արիւնհեղութիւններուն։ Այս անգամ ոչ ոք անակնկալ դէպքերէ յանկարծակիի եկած ըլլալու արդարացումը պիտի ունենայ։ Հայերը, որ բարոյականութեամբ վերսկսած են գաղթել, նաւահանգիստներու մէջ վշտի և սարսափի կենդանի պատկերը կը ներկայացնեն։

Խարբերդէն լուր կը տրուի թէ ֆրանսական հիւպատոսութեան ջնջուիլը, որ կոտորածներէ վերջ հաստատուած էր և որ անօգուտ համարեցին Փարիզի մէջ, նախանշանը եղաւ հայերու դէմ խստութեան և զրկանքի ամէն տեսակ միջոցներու։ Բանտերը անմեղներով լեցուած են և ոչ ոք ապահովութիւն ունի ոչ կեանքի և ոչ ստացուածքի։

—

Նոյն թերթին կը հեռագրեն Փարիզէն, ապրիլ 19-ին.

Վատահ աղբիւրէ իմացայ որ Անգլո-ռուսական համաձայնութիւնները ամբողջ սիստեմի մը վերածելու համար, բանակցութիւններ արագ կերպով առաջ կը տարուին Պետերբուրգի մէջ։ Արտաքին գործերու նախարար Իզվոլսկիի և Սրբ Ա. Նիկոլսընի յարաբերութիւնները ամենօրեայ և մասնաւորապէս մտերմական են։

Պարսկաստանի նկատմամբ համաձայնութենէ յետոյ, Թիւրքիոյ մասին ընդհանուր համաձայնութիւն մը բանակցութեան նիւթ դարձած է։

Այս բոպէիս առանձին համաձայնութիւն մը կը պատրաստուի Բաղդադի երկաթուղու և միւս գծերու վերաբերմամբ։ Որչափ ալ Ֆրանսան այս բանակցութիւններու ուղղակի չը մասնակցիր, բայց ստոյգ է որ իր շահերը պաշտպանուած են։ Ասոր հակառակ Ֆրանսան պարտաւորուած պիտի ըլլայ նկատի ունենալ այս համաձայնութիւնները միւս պետութեանց դէմ իր ունեցած քաղաքականութեան մէջ։

—

Մարտի 29-ին, Լատինաց Աւագ ուրբաթ օրը, երեկոյեան ժամը 8-ի միջոցները, ռումբ մը նետուած է Պոլսոյ Բերա թաղի մէջ Քէօչէ օղլու Անտոն պէյի տանը վրայ։ Ռումբի պայթիւնէն մեռած են 3 հոգի և վիրաւորուած 5 հոգի։ Եւրոպական թաղի մը մէջ ռումբի մը պայթիւնը եւրոպական գաղթականութեան մէջ առաջ բերած է մեծ վրդովմունք և միաժամանակ զայրոյթ թիւրք ոստիկանութեան դէմ, այնպէս որ ռումբի զոհերէ մէկուն, յոյն Լամբրինիդիսի թաղումը եղած է տեսակ մը հակակառավարական ցոյց։ Դէպքի հեղինակը, անոր պարագաները և շարժառիթը մնացած են անյայտ։ Ոմանք ռմբաձգութիւնը կը նկատեն Քէօչէ օղլուի սարքած մէկ խաղը, որով նա ուզեր է աւելի սիրելի դառնալ սուլթանին։ Իսկ ոմանք կը վերագրեն Ֆէհիմի մարդիկներուն՝ վրէժ լուծելու համար Քէօչէ օղլուէն, որը Ֆէհիմի նկատմամբ աննպաստ տեղեկագիրներ ուղղած է եղեր սուլթանին։ Իսկ ինքը Քէօչէ օղլու կը պնդէ որ ռումբը նետուած է իր խոհարարին կողմէ, որ անոր կեանքին վերջ տալու համար վարձուած է իր թշնամիներէն։ Թիւրք ոստիկանութիւնը իր կարգին դէպքը կը վերագրէ հայ յեղափոխականներու դաւադրութեան մը, և հետևաբար ձերբակալուած են 50-ի մօտ հայեր։

Ռուս բիւրոկրատիայի կեղտոտ մթնոլորտից մի չար ոգի եւս պակասեց: Պօբեդօնօսցեվի ետեւից գնաց և իշխան Գօլիցին, Կովկասի նախկին կառավարչապետը: Ո՞ր հայը զզւանքով չէ արտասանել այդ տխրիք բանսարկուի անունը, որ մի շարք տարիներ ողբով ու կոծով լցրեց գեղեցիկ Կովկասը և մանաւանդ հայաբնակ գաւառները և իր ժահրոտ թոյնով ապականեց այդ երկրի ներքին կեանքը: Հայ եկեղեցական կալուածքների աւազակային յափշտակութիւններն ու նրանց յաջորդող ընդհարումները, բանտերը, աքսորները նրա սարկական դօկլադների արդիւնքն էին: Նրա ցանած չար սերմերի պտուղներն էին նաև ամբողջ երկու տարւայ հայ-թուրքական արիւնոտ տեսարանները, որոնց սոսկալի հետեւանքները—սովն ու տարափոխիկ հիւանդութիւնները—գնալով հետզհետէ լայն չափեր են ստանում:

Հազարաւոր դժբախտացած ընտանիքների նզովքն ու անէծքն էին հետեւում Գոլիցինին քանի նա կենդանի էր, իսկ այսօր ամբողջ Կովկասն է ծափահարում նրա ժանտ մահւան աւետիքը լսելիս:

—

Կառավարութեան կարգադրութեամբ արգելուած է Թիֆլիսում հրատարակւող „Ժամանակ“ թերթը, Գոլիցինի մահւան առթիւ տպած հակակառավարչական յօդուածի պատճառով:

Մեռնելուց յետոյ է՛լ Գոլիցինի չար ոգին հանգիստ չի տալիս հայ մամուլին:

—

Հին-Նախիջեւանէն 21 ապրիլ թւականով կը հեռագրեն եւրոպական մամուլին՝

Խոխանի և Մակւայ մէջ, ինչպէս նաև Երևանեան նահանգի սահմանագլխի վրայ խառնակութիւններ ծագեցան: Մակւայ խանը էնջիւմէնի կուսակցութեան հնազանդիլ չուզելուն համար վռնդուած է: Խանը յաջողեցաւ Նախիջեւան փախչիլ և անկէ Երևան հասնել: Իր ապարանքը և գանձերը թալանուած են:

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրոն ստացած է՝

Զւիցերիա.—N-էն նւէր 100 ֆր., Անգորդէն 10:

Ռուսաստան.—Ոսկանապատի Կ. Կոմիտէի միջոցով „Դրամ“ կոմիտէէն՝ երկու անգամէն 19473 ֆրանք 70 սանտ.:

Ռումանիա.—Ֆօքշան քաղաքի „Աստղիկ“ խմբէն 72 ֆրանք. Նւիրատուներն են՝ Ս. Գալուստեան, Յ. Գրիգորեան, Մ. Գրիգորեան, Պ. Պօղոսեան, Դ. Հլղաթեան, Ա. Մուրատեան, Վ. Կիրակոսեան, Կ. Բապունեան, Ն. Գրիգորեան, Խ. Յարութիւնեան, Փայքօնճի Գրիգորեան, Դ. Միքայէլեան, Ճամբորդ մը, Խ. Սահակեան, Կ. Բուլանճեան, Ալն. Յարութիւնեան, Ս. Քարիպեան, Ս. Տօնիկեան 4-ական ֆրանք:

Ընդհ. գումար 19655 ֆրանք եւ 70 սանտ.:

Մ. Ռ.-ի Կ. Կոմիտէն՝

1906 հոկտեմբերի եւ նոյեմբերի հաշիւ: Լուսաւորիչ խմ. 20. 40, Կայծակ Մանկասարից 12, Իվանիկից 6, Սալա-ից 3, Մխօ Սարգսեանից 1, Սուրբ Խաչ խմ. նւէր 3, Խաչոից 5, Խալարով քարվ. բնւր, 2, Արաքս խմ. 4, Բորբոք խմ. 1. 70, Գասպարից 9, Լապտերավառ. արհ. միութ. 5. 90, Նաւթ. աղիքի գրծ. բնւր 3. 50, Լապ. միութ. զինւ. ընդնկ՝ 60, Համբից 7, Զոտկ շինող արհ. միութ 5. 24, Ծղալոբից 4, Գէորգ Սամբ-ից 5, Մրրիկ խմ. 9, Մխօ Սար-ից 1, Եարալեանի 9. 60, Նոյն 5. 75, Ոսկի 8, Սէր 2, Զիրիփ 2, Դաւա 2, Ժայռ 2, Ալիք 2, Արզում 2, Մանդինովի գործ. բնւր 16. 90, Դարչօ եւ Տիգրանից 8, Ոսկերիչ Թաքոսից նւէր 6, Բեղլուից 6, Կոնդիտեր. արհ. միութ 15. 72, Եարալ 4. 5, Մաթին-ից նւէր 3, Տիկին Նինոյից 10, Բաղդակից 3, Սիրի բանւորներից 27. 5, Սամբէզ-ից 5, Մարգ. մրտի գրծ. բնւր. 10. 60, Մասվաճառից 20, Պաղւալից 4. Հալլաբ. լապտերվառող 3, Գեղարքունի խմ. 4, Այրանք կայարանի բնւոր 10. 80, եւս 19. 50, եւս 13, Գործարանային շրջանից՝ Աղի մեքեն. բաժանմուն 11. 10, կօչիկ գործ. բնւր 9. 20, եւ խարազ. բաժ 9, գործ. 2-դ բաժ. 35, գործ 3-դ բաժ. 11. 50, զակրօյնի բաժանմ 4. 34, Սմբտ. դ. Գալօի տղի բաժ 7. 91, Խալաբ. դաքախանից 6. 55, Սմբատ դ Վանօի բնւ. 6. 82, Տօլ, բանւորներից 14. 19, Աղիլ. կաշւի գործ. բնւ 8, 5, եւս 10. 46, եւս 8. 56, եւս 10. 72, Աղիլ. մեքենայի բաժ. 11. 10, քաղիք, պաչ. բաժ. 8. 40, Սմբատ դաքախանից 13. 45, Խալաբ. բանւոր. 14. 50, Սմբատ 12. Աղիլ. քաղիքի գործ. 8. 24, կօշկակ 8. 70, կօշկակ. եւ խարազ. բաժ. 10. 70, Զարզարի բանւորներից 9, Աղիլ. գ. կօնկ. 11, քաղիք. զակր. 7. 23, կօշկակար 37. 10, զակրօյնի 5. 14, մեքենայակ 12. 10, Տօլլի բանւորներից 15. 12, Աղիլ. բուրօչնի գործ. 8. 20, Արհեստաւորներից 19. 40, Զակրօյչիկներից 7. 4, Կանանց խմ. 2. 90, Գործարանից 4, ստորոժներից 5. 58, Սէրից 6, Լազօից 15,

Ընդամենը 738 ռուբ. 61 կոպ.:

Գահիրէի Ենթակոմիտէն՝

1906 ց վերջ դեկտ. անդամավճարներ հետեւեալ խմբերէն: Արեւ խ. 390 դահեկան: Անահիտ խ. 275 նոյն խմբի ձեռամբ նուէրներ՝ Կաղինէ 20, Դանիէլ Թիմուրէ Ասիուր՝ 40, Կորիւն խ. 195, նոյն խ.ի ձեռամբ Արշաւիր 5, Տաղիկ խ. 158, Միհրդատ խ. 85, Թաքուլ խ. 50:

Ընդամենը գումար 1218 դահեկան ողջ,

Վրիպակ—1907 փետ. ամսոյ „Դրօշակ“ի մէջ հրատարակուած Գահիրէի հաշւոյն մէջ. Հանիսեանէ նւէր 292. 50, պէտք է ըլլայ 50 դահեկան նւէր միայն. իսկ մնացեալ 147. 50, դահ. ինն հաշիւ, որ վճարուած է:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Ֆր. ս.
1.	Ազատամարտական ոգի (սպառուած)	.10
2.	Յեղափոխական կեանքից (սպառ.)	.05
3.	Դաշտենի տղաքն (սպառ.)	.05
4.	Գիտական սօցիալիզմ. Ֆ. ԷՆԳԵԼՍ (սպառ.)	.40
5.	Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր. (Դ. տպագր.)	—
6.	Կուկունեան խմբի արշաւանքը. (սպառ.)	.20
7.	Սասնոյ յիշատակին (Զորն հատուած) „	.50
8.	Հ. Յ. Դ. Երկրորդ ընդհ. ժողովի ատենագրութիւնը	—
9.	Գերփչներ, Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ (սպառ)	.20
10.	Երիտասարդներին. Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ. (սպառ.)	.20
11.	Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.)	.30
12.	„ „ „ Բ. „	.60
13.	Ամբոխային տրամաբանութիւն. ԷԼԼԷՆԻ. (սպառ.)	.50
14.	Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Գ. „	.30
15.	Հայաստան եւ Մակեդոնիա.	.50
16.	Կովկասեան վէրքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառուած)	3.—
17.	Հայրենիքի գաղափարը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառ.)	1.—
18.	Կազմակերպական կանոններ. (Բ. տպագր.)	—
19.	Դէպի կախ. Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառուած)	2.—
20.	Յեղափոխականներ. Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառ.)	.20
21.	Նախագիծ Կովկասեան գործունէութեան. (Բ. տպ.)	—
22.	Подвиги царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI	.20
24.	Յեղափոխական դասն.	.20
25.	Հ. Յ. Դ. Երրորդ ընդհ. ժողովի ատենագրութիւնը.	—
26.	Կոչ Մահմէտականներին (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase,** E. AKNOUNI	2.—
28.	Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Դ. գրքոյկ.	.40
29.	Մեծ մարդասպանի դէմ (Դատավարութիւն)	.50
30.	Վլիսօցի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ.	.50
31.	Յեղափոխականի մտքեր. ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	1.—
32.	Հայորդիները. ՍԻԱՄԱՆԹՕ.	.50
33.	Սասուն-Մուշի կռիւները	.50
34.	Հայկական տանջանքները եւ Եւրոպան. ԲԵՐՆՇՏԱՅՆ	.50
35.	Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ.	1.—
36.	Միացէ՛ք, կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն)	.10
37.	Թիւրքական բանտերը. ՄԱՐ.	.25
38.	Ռազմական կուսակցութիւնները Ռուսաստանում	.50
39.	Հայաստանը եւ Եւրոպան. Գ. ԲՐԱՆԴԷՍ	.20
40.	Աղբիւր-Սերոբ (կենսագրական). Ս. Մ.	.25